1407.

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք*

Պաշավիաքիմը ԽՍՀՄ խաղաղ աշխատանքի յեվ պաշտ-պանության հենարանն է։

24

# ԽՍՀՄ ՅԵՎ ՌՍՖԽՀ

## ՊԱՇԱՎԻԱՔԻՄԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ IV ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գինը 40 կոպ.

355
Պ-24

ՅԵՐԵՎԱՆ 1933

355
Ո-24

Պետհրատի տպարան
Գլավլիտ ս 9217 (բ)
Պատվեր 1419
Տիրաժ 2500
▽

Թարգ. Գ. Աթայան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

ZUՍՈ-Арм ССР
им. А. Мяс
37972.62
1 MAR 2010

# ՎՈՐՈՇՈՒՄ

«Ընկերության ստորին օղակի ամրապնդումը յեվ պաշավիաքիմիական բջիջների խնդիրները գյուղում» ընկ. Բելոցկու զեկուցման առթիվ:

## I. ՍՏՈՐԻՆ ՕՂԱԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Պաշավիաքիմի համար Համ Կ (բ) Կ կենտկոմի պատմական վորոշումը՝ Ընկերության աշխատանքի և խնդիրների մասին՝ հատուկ ուժով ընդգծում է պաշավիաքիմիական ստորին բջիջի նշանակությունը, բնորոշելով այն վորպես «կարեվորագույն օղակ» և «Ընկերության ողջ մասսայական աշխատանքի հիմքը»։ Կենտկոմի այդ ցուցումից յելնելով՝ Կենտրոնական խորհրդի III պլենումը միանգամայն ճիշտ սահմանել է բջիջի աշխատանքի հիմնական բովանդակությունը և Ընկերության բոլոր կազմակերպությունների առաջ կոնկրետ խնդիրներ է դրել նրա ամրապնդման համար։

2. III պլենումից հետո անցած մի տարվա ընթացքում Ընկերությունը վորոշ հաջողություններ է ունեցել այդ խնդիրների կատարման ուղղությամբ։ Մենք հիմա ունենք արդեն մի քանի հարյուր խոշոր ձեռնարկություններ, վորոնք պաշավիաքիմիական [illegible]

18 JUL 2013
40.470

լի կազմակերպություններ ունեն («Կրասնայա Զարյա», «Դինամո», «Կրասնի Պուտիլովեց», «Կաուչուկ», «Լենինսկայա Կուզնիցա», Ստալինի անվան կզզի։) Այդ ձեռնարկություններից շատերում դեռ մի քանի ամիս սրանից առաջ պաշտպանության աշխատանքը գտնվելիս է չեղել ամենախոր ճեղքվածքի մեջ («Կրասնի «Պուտիլովեց, «Դինամո»)։ Այժմ այդ գործարանների բջիջները, իրենց կուսկոմիտեների և Պաշավիաքիմի շրջանային խորհուրդների ղեկավարության տակ, կազմակերպչորեն ամրացել են, անց են կացրել վերահաշվառումն ու վերընտրությունները, քանակապես աճել են (վերահաշվառման ժամանակաշրջանում Դինամոյի կազմակերպությունը 1.508 մարդուց աճել է մինչև 5.200 մարդ, այժմ նա ունի 7.400 մարդ կամ գործարանի բանվորների և ծառայողների 75%) և մի շարք խմբակներ ունեն (հրաձգային, ռազմատեխնիկական, պլանյորական և այլն։) Կարելի չէ կանոն համարել այն հանգամանքը, որ մեր երկրում յուրաքանչյուր խոշոր ձեռնարկություն ունի իր ռազմական վարժակայանը, որտեղ սովորում են հազարավոր բանվորներ՝ պաշավիաքիմական նախակոչիկներ, արտադրականներ և այլն։

Պաշավիաքիմական աշխատանքի կենտրոնը խոշոր չափով փոխադրված է անմիջականորեն ձեռնարկության մեջ, իսկ վողջ մասսայական ռազմական աշխատանքի կենտրոնն սկսում է իջնել ցեխերն ու բրիգադները։

Գյուղում մենք արդեն ունենք առանձին խորհտնտեսություններ, ՄՏԿ (Մեքենա-Տրակտորային կայաններ) և կոլտնտեսություններ, որտեղ պաշավիաքիմական աշխատանքն օրինակելի չէ դրված (Բուզուլուկի շրջանի «Կլյուչի» կոլտնտեսությունը, Մոսկովյան մարզի «Պերելոմ» կոլտնտեսությունը, Զապայեվի անվան խորհտնտեսությունը և այլն)։



3. Ընկերությունը հասել է այդ հաջողություններին, Կենտկոմի ցուցումները բոլշևիկորեն կատարելու համար պայքար մղելու հիման վրա, ամենալայն մասսայական քաղաքական կամպանիաների ծավալման միջոցով (ստուգատես, վերընտրություններ, վերահաշվառում) և մոբիլիզացիայի ենթարկելով բոլոր պաշավիաքիմիական կազմակերպությունները, մամուլը և հասարակությունը՝ բջիջն ամրապնդելու պայքար մղելու համար։ Այդ գործում բացառիկ դեր են խաղացել կուսակցական կազմակերպությունների ղեկավարությունն ու կոնկրետ օգնությունը և պրոֆմիությունների ու կոմյերիտմիության հետ միասին տարած միասնական աշխատանքը։ Կենտրոնական ու տեղական կուսակցական, պրոֆմիութենական ու կոմյերիտական մամուլը, գործարանային բազմատիրաժ ու պատի թերթերը չափազանց ակտիվորեն օգնել են Ընկերության մասսայական աշխատանքի ծավալմանը, մերկացնելով թերությունները և մասսաները կազմակերպելով դրանց դեմ պայքար մղելու և Պաշավիաքիմի ստորին բջիջներն ամրապնդելու համար։

Հատկապես պետք է մատնանշել կոմյերիտմիության նախաձեռնությունն ու յեռանդն այնպիսի կարևորագույն մասսայական կամպանիաներն անցկացնելու գործում, ինչպիսին են «Վորոշիլովյան եստաֆետը», ստուգատեսը, վերընտրությունները և այլն, որոնք հսկայական դեր են խաղացել Պաշավիաքիմի բջիջի ամրապնդման համար պայքար մղելու գործում։

4. Ստորին օղակի ամրապնդման համար մեկ տարվա աշխատանքի արդյունքները ցույց են տալիս, որ

Ընկերությունը հաստատապես բռնել է ճիշտ ուղին և բավականին փորձ է կուտակել պաշտպանքիմիական ամուր բջիջի համար նոր լայն հարձակում ծավալելու համար։

Սակայն պաշտպանքիմիական ստորին բջիջի ամրապնդման գործում մեր ունեցած անկասկած նվաճումները և մի շարք պաշտպանքիմիական բջիջների աշխատանքի վերակառուցումը դեռևս չենք խոսում այն բանի մասին, որ Պաշտպանքիմը կատարել է Համ Կ (բ) Կ Կենտկոմի ցուցումները՝ Ընկերության աշխատանքի և խնդիրների մասին։

Այն փաստը, որ ամուր, լավ աշխատող բջիջները դեռևս կարելի չէ հաշվել միայն հարյուրյակներով, ասում է այն մասին, որ տեղաշարժը բջիջի ամրապնդման գործում վճռական և ընդհանուր չէ և որ Կենտկոմի որոշումների կատարման համար պայքարը շատ շրջաններում և մի քանի երկրներում, հանրապետություններում (Ստորին Վոլգա, Միջին Վոլգա, Բելոռուսիա, Կենտրոնական Սևհող մարզ) միանգամայն անբավարար է մղվում։

Մեր Ընկերության աշխատանքի և նրա աշխատանքի վերակառուցման մասին Համ Կ(բ)Կ Կենտկոմի ցուցումները կյանքում բոլշևիկորեն կիրառելու համար մղվելիք պայքարը մնում է մեզ համար որպես հիմնական խնդիր՝ մոտ ապագայի ժամանակաշրջանի համար։

5. Կենտխորհրդի դեռ III պլենումը մատնանշել է, որ բացակայում է սրված դասակարգային աչալրջությունը. դրա հետևանքը մի շարք դեպքերում եղել է այն, որ Ընկերության շարքերի և նրա ապարատի մեջ սողոսկել են դասակարգայնորեն անհարազատ տարրեր։ III պլենումից հետո անցած ժամանակաշրջանը բնորոշվում է մեր կուսակցության հսկայական հաղթանակներով՝ սոցիալիստական շինարարության և դասակարգային պայքարի սրվածության բնագավառում, հատկապես առանձին շրջաններում և սոցիալիստական շինարարության առանձին ճյուղերում։



Մի շարք կազմակերպություններում, մանավանդ Հյուսիսային Կովկասում, Բելոռուսիայում և Ուկրաինայում հայտաբերվել է պաշտպանքիմիական բջիջների աղբոտումը կուլակային տարրերով։ Պաշտպանքիմի շատ բջիջների և նույնիսկ մի քանի շրջանային խորհուրդների գլուխ կանգնած են եղել դասակարգայնորեն անհարազատ տարրերը, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել հացամթերումների կուլակային սաբոտաժի գործում։ Մեր շատ կազմակերպություններում դեռևս հարգվում են «ճարպիկ» մարդիկ, ամեն բան իմացող «վարպետները», ջախջախված՝ շահագործող դասակարգերի բեկորներից մնացած սրիկաները, աչքակապության մասնագետները, գողերն ու գեղծարարները, որոնք քայքայում են ԽՍՀՄ-ի պաշտպանության գործը։ Այդ տարրերի դեմ պայքարը մղվում է ոչ բավարար չափով, իսկ մի շարք տեղերում միանգամայն անբավարար է մղվում։

Առանձնապես պետք է մատնանշել Բելոռուսիայի կազմակերպությունը, որտեղ Բելոռուսիայի Պաշտպանքիմի կենտխորհրդի կազմի այլասերվածների ղեկավարությամբ մշակվելիս է եղել աչքակապությունը, թուլացվել է պայքարն անհարազատ տարրերի դեմ և տեղի չի ունեցել նրանց քայքայիչ աշխատանքի ուղղակի թույլատրումը։

Այս բոլոր փաստերը կարող էին տեղի ունենալ՝ թշնամական տարրերի նկատմամբ մի շարք ղեկավար-

ների ոպորտունիստական կուրության շնորհիվ, մի շարք կազմակերպություններում պրոլետարական ինքնաքննադատության բացակայության շնորհիվ և մասսաների առաջ լայն հաշվետվություն տալուց վախենալու պատճառով։

6. Ստորին օղակի ամրապնդման գործում վճռական հաջողությունների բացակայությունը բնորոշվում է նաև բջիջների վիճակի արտասովոր խայտաբղետությամբ։ Շատ հաճախ միևնույն պայմաններում գտնվող ձեռնարկություններում, կոլտնտեսություններում պաշտվիաքիմիական աշխատանքի վիճակը միանգամայն տարբեր է լինում։ Այդ խայտաբղետությունը ցույց է տալիս, վոր բանն «օբյեկտիվ» պատճառների մեջ չէ, այլ բանը մարդկանց մեջ է, բանը ղեկավարման վորակի, բոլշևիկյան համառության և աշխատանքի ամեն մի բնագավառում, դրանց թվում նաև պաշտվիաքիմիական աշխատանքի բնագավառում կուսակցության գլխավոր գծի համար պայքարել կարողանալու մեջ է։

Այս հանգամանքը հիմնական պատճառն է հանդիսանում, վոր, չնայած մի շարք շրջանների և գյուղի ու քաղաքի բջիջների օրինակելի աշխատանքին, վոչ մի մարզ ամբողջովին չի ավարտել վերընտրությունները ու վերահաշվառումը, իսկ Բելոռուսիայում վերընտրությունները վերացված են ամբողջ հանրապետության մեջ, վորովհետև անց են կացվել ֆորմալ-բյուրոկրատիկ յեղանակով և առանց մոբիլիզացիայի յենթարկելու մասսաներին՝ պայքար մղելու Ընկերության շարքերի դասակարգային մաքրության համար և ղեկավարման բոլշևիկյան կադրերի ընտրության համար։

7. Ընկերության ստորին բջիջների ամենալուրջ թերությունը հանդիսանում է այն, վոր նրանցից շա-



տերը գտնվում են խառնաշփոթ վիճակում, վոր աշխատանքի ընթացքում բացակայում է կազմակերպչական պարզորոշությունը, չեն կարողանում հասարակայնության ամենալայն ներգրավումը համակցել պլանային հաշվառումն ու հաշվետվությունը խստորեն անցկացնելու, կատարման ստուգման և ամուր կարգապահություն սահմանելու հետ։ Ստորին օղակի ղեկավարման վորակը շրջանային խորհուրդների և յերկրային ու մարզային խորհուրդներից շատերի կողմից, գտնվում է չափազանց ցածր մակարդակի վրա։ Կենդանի ոգնությունը, իսկական ցուցադրությունը և ամենալավերի փորձի փոխանցումը հաճախ փոխարինվում են գրագրությունների միջոցով ղեկավարությամբ և վարչարարությամբ։

8։ Պլենումը կոչ է անում բոլոր կազմակերպություններին, բոլոր բջիջներին և Ընկերության յուրաքանչյուր անդամին՝ ցուցաբերել բոլշևիկյան դասակարգային աչալրջություն, վճռականորեն պայքար մղել դասակարգային թշնամու՝ մեր Ընկերության շարքերը սողոսկելու փորձերի դեմ, վորն իր համար նպատակ է դնում, քողարկվելով Պաշտվիաքիմի անդամի կոչումով, տանելու իր քայքայիչ աշխատանքը։ Դասակարգային պայքարի ժամանակակից պայմաններում թշնամին հաճախ քողարկվելով «ակտիվ» աշխատանքով, փոխում է իր տակտիկան, վորպեսզի խաբի մեր ընկերների դասակարգային աչալրջությունը։

Պլենումը կոչ է անում բոլոր կազմակերպություններին, վորպեսզի նրանք վճռականորեն վռնդեն մեր Ընկերության շարքերից բոլոր դասակարգայնորեն անհարազատ տարրերին, այլասերվածներին և դասակարգային թշնամու ագենտներին, թեկուզ ինչպիսի դիմակով էլ նրանք քողարկված լինեն։

Պաջավիաքիմի բջիջները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն Ռազմական վարժակայանների, հրաձգային խմբակների և զանազան պաջավիաքիմական դպրոցների [սնայպերի, օդաչուական, պլանյորական, ՀՈՊ (Հակաօդային պաշտպանության) և այլն] համալրման հարցերին։ Պետք է սահմանել, որ դպրոցների և վարժակայանների կադրային ու փոփոխական կազմի մեջ անհարազատ տարրերի սողոսկման համար պատասխանատու չեն Պաջավիաքիմի համապատասխան գործարանային խորհրդի (բջիջի) նախագահը և դպրոցի ու վարժակայանի պետը (կոմիսարը)։

Դասակարգային աչալրջությունը պետք է պաջավիաքիմական կազմակերպության յուրաքանչյուր ղեկավարի հիմնական հատկությունը լինի։

Պլենումն առաջարկում է Ընկերության բոլոր կազմակերպություններին՝ մոբիլիզացիայի ենթարկել բոլոր ուժերը՝ հետագայում պայքար մղելու մեր Ընկերության աշխատանքի մասին Համ Կ(բ)Կ Կենտկոմի ցուցումների կատարման համար, վճռական պայքար մղելու մեր բջիջների կազմակերպչական ամրապնդման համար, ամեն կերպ բարելավելու նրանց աշխատանքը մասսաների մեջ։ Պլենումն առաջարկում է բոլոր կազմակերպությունների վերընտրությունները ավարտել քաղաքներում առ 1 մայիսի և գյուղում հունիսի 1-ից ոչ ուշ, ստեղծելով ամուր, դասակարգայնորեն տոկուն, աշխատունակ ղեկավարություն և նրա շուրջը համախմբելով պաշտպանության ենթուզիաստների (խանդավառների) և հարվածայինների ակտիվը։ Պլենումը գտնում է, որ Պաջավիաքիմի առաջ կանգնած խնդիրների կատարման և Համ Կ(բ)Կ Կենտկոմի ցուցումները կյանքում կիրառելու վճռական պայմանը



հանդիսանում է ղեկավարության վճռական բարելավումը ներքևից մինչև վերև և աշխատանքի ընթացքում ամուր կարգապահության ու կազմակերպվածության սահմանումը։ Պաջավիաքիմի Մարզային, Երկրային և Հանրապետական խորհուրդների հիմնական և ամենամոտալուտ խնդիրներից մեկն է հանդիսանում Պաջավիաքիմի շրջանային (մանավանդ գյուղական) խորհուրդների ամրապնդումը։ Շրջանային, Մարզային, Երկրային խորհուրդների աշխատանքի ընթացքում հիմնական ուշադրությունը պետք է նվիրել ստորին բջիջին օգնություն հասցնելուն՝ կենդանի, կոնկրետ, դիֆերենցված ղեկավարության հիման վրա։

Հատուկ ուշադրություն պետք է նվիրել կատարման ստուգմանը և հաշվառման կազմակերպությանը։ Պլենումը հանձնարարում է Կենտրոնական Խորհրդի Նախագահությանը՝ նորից ստուգել ստորին կազմակերպությունների հաշվառման ու հաշվետվության ձևերը և ամեն կերպ պարզեցնել ու կրճատել այդ ձևերը։ Ստորին բջիջների ղեկավարման ժամանակ պետք է գործադրել աշխատանքի դիֆերենցված, մոտավոր ամսական պլանների կազմումը։ Պետք է զարգացնել առաջատար բջիջների փորձը՝ ձեռնարկության, խորհտնտեսության, ՄՏ կայանի, կոլտնտեսության ռազմական աշխատանքի միասնական պլանները կազմելու գործում։

Ակտիվի հետ տարվելիք աշխատանքի ընթացքում հիմնական ուշադրությունը պետք է նվիրել նրանց կոնկրետ գիտելիքներով կանոնավոր բեռնավորմանը և նրանց օգնություն ցույց տալուն՝ հանձնարարած առաջադրությունները կատարելու գործում։

Պլենումը կոչ է անում Ընկերության բոլոր կազ-

մակերպություններին, բջիջներին և բոլոր անդամներին՝ աշխատանքի ընթացքում լայն և իսկական պրոլետարական ինքնաքննադատություն ծավալել, նրա սուրն ուղղելով դասակարգայնորեն անհարազատ և բյուրոկրատիկ տարրերի դեմ։

## II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԱՃՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՐԻՆ ԱԿՏԻՎԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

9. Կազմակերպության հետագա աճման նկատմամբ Պլենումը խնդիր է դնում անդամության մեջ ընդգրկել արդյունաբերական ձեռնարկությունների, ՄՏ կայանների և խորհտնտեսությունների բոլոր բանվորներին և Ընկերության շարքերի մեջ ներգրավել բոլոր ազնիվ, ստուգված և Խորհրդային իշխանությանը նվիրված կոլտնտեսականներին ու մենատնտեսներին և, առաջին հերթին, սոցիալիստական դաշտերի հարվածայիններին։ Լայն մասսայական կազմակերպություն հանդիսանալով, վորն իր առաջ դնում է, վորպես կարեվորագույն խնդիրներից մեկը, աշխատավորներին սոցիալիստական վոգով վերադաստիարակելու խնդիրը՝ իրենց սոցիալիստական հայրենիքի պաշտպանությանը պատրաստվելու գործում, նրանց ունեցած ակտիվ մասնակցության բազայի վրա — Պաշավիաքիմը պետք է վճռականորեն դուրս վռնդի իր շարքերից բոլոր դասակարգայնորեն անհարազատ և դեպի կուսակցության ու Խորհրդային իշխանության միջոցառումները թշնամաբար տրամադրված տարրերին։

Դասակարգային աչալրջությունը պետք է ցուցաբերվի իր հատուկ սրությամբ Ընկերության անդամության մեջ ընդունելու ժամանակ, մանավանդ գյուղում։ Պետք է, վորպես կանոն, սահմանել, վոր Պաշավիաքիմի անդամության մեջ ընդունելությունն անցնի Պաշավիաքիմի անդամների ընդհանուր ցեխային, բրիգադային և խմբակային ժողովներում, նոր մտնողների ցուցակները նախապես փակցնելով աչքի ընկնող տեղերում՝ ակումբներում, գյուղխորհուրդներում, կոլտնտեսությունների վարչություններում և այլն։

Ընկերության անդամության մեջ ներգրավելու վերաբերյալ աշխատանքը չի կարող կամպանիաներով սահմանափակվել, մի դեպքից մինչև մյուս դեպքը, այլ պետք է անցկացվի սիստեմատիկորեն և անընդհատ կերպով։

Պետք է դադարեցնել անդամների վերահաշվառումը, վորպես ինքնուրույն կամպանիա անցկացնելը, և սահմանել կազմակերպության քանակական ու սոցիալական կազմի մասին տեղեկությունները Կենտխորհրդին ներկայացնելու սիստեմը տարեկան յերկու անգամ — առ 1-ը հուլիսի և առ 1-ը փետրվարի (առ 1-ը մայիսի և առ 1-ը հունվարի յեղած վիճակի համեմատ)։

10. Պետք է հատուկ ուշադրություն դարձնել Ընկերության ստորին ակտիվի դասակարգային ընտրությանը և նրա պատրաստականությանը։ Ստորին ակտիվի պատրաստման և վերապատրաստման նպատակով անցկացնել հետևյալ միջոցառումները։

ա) Սեմինարներ՝ ձեռնարկությունների Պաշավիաքիմի բջիջի նախագահներ պատրաստելու համար, քաղաքային շրջանային խորհուրդներին, կից վոր պետք է հաշված լինեն 24 ժամվա ծրագիր անցնելու համար (նայած տեղական պայմաններին, ունկնդիրներին արտադրությունից կտրելով կամ առանց կտրելու)։ Ժամկետը՝ ապրիլ — մայիս։

բ) Միամսյա յերկրային ու մարզային կուրսեր՝ ՄՏ կայանների և խորհտնտեսությունների բջիջների նախագահների (քարտուղարների) համար։ Կուրսերը պետք ե անցկացնել մինչև օգոստոսի 1-ը ժամանակաշրջանում, առանձին մարզերում ու շրջաններում դիֆերենցված ձևով, ցանքսն ավարտելուց հետո և մինչև բերքահավաքի կամպանիան սկսելը։

գ) բջիջային աշխատանքի առանձին բնագավառներում աշխատողներ պատրաստելու նպատակով, պետք ե մտցնել վերապատրաստման սիստեմը, առանց արտադրությունից կտրելու, կարճատև սեմինարներում, 5-ից — 10 օր տեվողությամբ, հասարակական աշխատող ակտիվիստների համար՝ խմբակների կազմակերպիչների, կազմմասսայական աշխատողների, մարտական պատրաստության բաժնի աշխատողների, կինոսեկտորի աշխատողների, Ընկերության պատանի բարեկամների, ՀՕՊ (հակօդային պաշտպանության) գծով աշխատողների, գանձապահների, անդամավճարների հավաքարարների վիճակախաղի իրացման լիազորների համար և այլն։

Խնդրել ԲԳԿԲ քաղաքական վարչությունը՝ յերկրային զորամասերի ընդհանուր և յեռամսյա հավաքների ժամանակ կազմակերպել 1933 թվին զինվորական ծառայությունն ավարտողներից կարճատև սեմինարներ՝ պաշավիաքիմիական ստորին ակտիվի պատրաստման և վերապատրաստման համար, առաջին հերթին՝ ՄՏ կայանների, խորհտնտեսությունների կոլտնտեսությունների համար։



## III. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

11. Պաշավիաքիմիական բջիջներից շատերի աշխատանքի ընթացքում աղաղակող բացն ե՝ ծավալված մասսայական Ռազմաքաղաքական ագիտացիայի բացակայությունը։ Պաշավիաքիմի մարզային ու շրջանային խորհուրդների մեծ մասը դեռ չի հասկացել, վոր Ընկերության բջիջը պետք ե կուսակցության առաջին օգնականը լինի ամենալայն մասսաներում սիստեմատիկ աշխատանք ծավալելու գործում՝ ԽՍՀՄ-ի վրա իմպերիալիստների կողմից ռազմական հարձակման պատրաստությունը մերկացնելու և մասսաներում պատերազմի և բանակի մասին մարքս-լենինյան ուսմունքը մասսայականացնելու համար։

Դրա հետ միասին, պաշավիաքիմիական բջիջների մեծ մասը, պայքար մղելով վարժակայանների աշխատանքի ու նախակոչիկների և արտազորային պատրաստության ծավալման համար, շատ քիչ ուշադրություն ե նվիրել սկզբնական մասսայական ռազմական աշխատանքի համար դրվածքին, վորով պետք ե ընդգրկված լինեն հարյուր հազարավոր և միլիոնավոր աշխատավորներ, վորոնք ծանոթ չեն ռազմական գործին և ժամանակակից ռազմական տեխնիկային։

Մասսայական ռազմական աշխատանքից հրաժարվելու այդ անպետք պրակտիկան սնվում ե օպորտունիստական կասկածներով, թե արդյոք անհրաժեշտ ե պահպանել մեր Ընկերության կամավորական բնույթը և դրա հետ կապված մասսայական աշխատանքի ձևերն ու մեթոդները։

Այդ հայացքների հանդես գալը պատահական չէ։ Դրանք իրենց մեջ արտացոլում են մեր Ընկերության մեջ չեղած չինովնիկական, բյուրոկրատական, հակակուսակցական տարրերի հարձակումը, որոնք փորձում են մեր Ընկերությունը կտրել մասսաներից ու սոցիալիստական շինարարական խնդիրներից և վերածել այն «Ռեզերվների մշակման համար չեզոք գերատեսչության», չնայած այն հանգամանքին, որ մեր Ընկերությունը կուսակցության այն շարժափոկն է հանդիսանում, որ տանում է դեպի մասսաները։

Պլենումն առաջարկում է ընկերության բոլոր կազմակերպություններին՝ կատաղի պայքար ծավալել այդ ամենավնասակար դրվածքների դեմ, որոնք օբյեկտիվորեն ուղղված են պաշտպանության պրոլետարական կազմակերպության հենց գաղափարի դեմ, մերկացնել մասսայական ռազմական աշխատանքից հրաժարվելու հակակուսակցական և դասակարգայնորեն թշնամական էությունը։

Ամենամոտ ժամանակաշրջանում պետք է վճռական միջոցներ ձեռք առնել Պաշավիաքիմիական աշխատանքի այդ կարևորագույն բնագավառում բեկում ստեղծելու համար։

Այդ նպատակով պետք է.

ա) Պաշավիաքիմի բոլոր բջիջներին կից խմբակային ագիտատորների ինստիտուտ ստեղծել, նրանց համախմբելով պաշտպանության ագիտացիոն խմբակի մեջ, սիստեմատիկ ագիտացիոն աշխատանք անցկացնելու համար անմիջականորեն ցեխում, դաշտային և ագրեգատի մոտ։ Ծավալել մասսայական ռազմաքաղաքական ագիտացիայի ձևերը (միտինգներ, ժողովներ, քաղմարտեր, վիկտորինաներ և այլն) և պրակտիկայի մեջ մտցնել ռազմաքաղաքական ագիտացիայի համար պաշտպանության աշխատանքի բազմազան ձևերի օգտագործումը (ագիտ-բրիգադներ, թատրոններ, կինո, ռադիո).



բ) հաշվի առնելով ռազմական պատրաստությամբ աշխատավորների մասսայական ընդգրկման և ռազմական տարրական անգրագիտության վերացման հրատապ նշանակությունը, բոլոր շրջանային խորհուրդների և բջիջների առաջ, որպես գործնական խնդիր դնել՝ ամառվա ժամանակաշրջանում ընդգրկել սկզբնական մասսայական ռազմական աշխատանքի ձևով ձեռնարկությունների և Պաշավիաքիմի անվան բրիգադների բանվորներին, իսկ գյուղում՝ կոլտնտեսությունների, ՄՏ կայանների և խորհտնտեսությունների պաշավիաքիմիական բրիգադների հարվածայիններին.

գ) սկզբնական մասսայական ռազմական աշխատանքի կազմակերպիչների և խմբակավարների պատրաստության համար, ձեռնարկությունների և ՄՏ կայանների բջիջների նախագահների ու քարտուղարների պատրաստության հետ զուգընթաց, կազմակերպել Պաշավիաքիմի շրջանային խորհուրդներին կից (կամ ձեռնարկությունների խմբակցություններում) սեմինարներ առանց արտադրությունից կտրվելու.

դ) ռազմա-տեխնիկական պրոպագանդը, որը խընդիր է դնում լայն չափով մոբիլիզացիայի ենթարկել աշխատավոր մասսաներին պայքար մղելու՝ ռազմական տեխնիկային տիրապետելու համար, պետք է զուգակցված լինի ձեռնարկություններում և ՄՏ կայաններում ռազմա-տեխնիկական խմբակների լայն ցանցի ծավալման հետ, ձեռնարկությունների և ՄՏ կայանների արտադրական բնույթի համապատասխան (ՄՏ կայան-

ՀՍՍՌ-Арм ССР

ներին և ավտո-տրակտորային արդյունաբերությանը կից՝ զրահատանկային խմբակներ, քիմիական գործարաններին կից՝ քիմիական խմբակներ և այլն)։

12. Արձանագրելով աշխատանքի չափազանց թույլ ծավալումը կանանց մեջ՝ Պլենումը մատնանշում է, որ այդ աշխատանքի թուլության պատճառներից մեկն է՝ կանանց մեջ տարվելիք աշխատանքի հսկայական նշանակության թերագնահատումը Ընկերության այդ նոր ետապում, որն ուղղված է Ընկերությանը ԲԳԿԲ.ի իսկական ռեզերվը դարձնելու համար։ Այդ թերագնահատումը նույնպես բխում է այն միանգամայն սխալ դրվածքներից, վորոնք նսեմացնում են Պաշավիաքիմի կազմակերպության, վորպես մասսայական պրոլետարական ընկերության բնույթը, վորը ներգրավում է աշխատավորների ամենալայն խավերը, նրանց թվում նաև կանանց՝ պաշտպանության համար յերկիրը պատրաստելու աշխատանքի մեջ։

Աշխատավոր կանանց լայն մասսաների աճող քաղաքական ակտիվությունը և ապագա պատերազմում կնոջ հսկայական դերը հատուկ ուշադրություն են պահանջում բոլոր պաշավիաքիմիական կազմակերպությունների կողմից և միևնույն ժամանակ պահանջում են ներգրավել պաշտպանության ակտիվ աշխատանքի մեջ աշխատավոր և կոլտնտեսային կանանց միլիոնավոր մասսաները։ Պաշավիաքիմի շարքերը կանանց ներգրավելու և նրանց ակտիվ աշխատանքի, մանավանդ ՀՕՊ (հակօդային պաշտպանության) գծով ներգրավելու հետ միասին, Պլենումն Ընկերության բոլոր կազմակերպությունների առաջ խնդիր է դնում՝ լայնորեն ծավալել աշխատավոր կանանց մեջ ռազմաքաղաքական ագիտացիան և սկզբնական մասսայական ռազմական



աշխատանքը։ Այդ նպատակի համար պետք է նշանակել ագիտատորների և հրահանգիչների հատուկ կադրեր և մշակել դիֆերենցված ձևեր ու մեթոդներ՝ ձեռնարկության, գյուղի, բնակվարձկոոպի համար։

13. Միանգամայն անբավարար չափով է ծավալված յերեխաների մեջ տարվելիք աշխատանքը։ «Պաշավիաքիմի պատանի բարեկամների» (ՊՊԲ) խմբակների ցանցը փոքր է և դեռևս անբավարար է աշխատում. այդ բացատրվում է նրանով, վոր շրջանային, յերկրային, մարզային և հանրապետական խորհուրդների մեծ մասն ուշադրություն չի դարձնում աշխատանքի այդ բնագավառին։ Պլենումն անհրաժեշտ է գտնում վճռական բեկում ստեղծել յերեխաների մեջ տարվելիք աշխատանքում, կապվելով վերևից մինչև ներքև պիոներական կազմակերպությունների հետ և հատուկ ուշադրություն դարձնելով դպրոցում Պաշավիաքիմի աշխատանքի ծավալմանը։

Անհապաղ պետք է սկսել պիոներական լագերներում պաշտպանության աշխատանքի ծավալման ապահովումը, և առաջին հերթին ձգտել, վոր 1933 թվին վոչ մի լագեր չլինի առանց մասսայական ռազմաքաղաքական աշխատանքի ղեկավարի։

## IV. ԳՅՈՒՂՈՒՄ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

14. Մեր Ընկերության աշխատանքի ամենաթույլ բնագավառը մինչև հիմա հանդիսանում է գյուղում տարվելիք աշխատանքը։ III Պլենումի վորոշումը՝ ՄՏ կայանները, խորհտնտեսությունները և Կարմիր բանակային կոլտնտեսությունները պաշտպանության աշխատանքի հենակետեր դարձնելու մասին, անկատար է մնացել։

Հատկապես անհանդուրժելի յե պաշտպանության աշխատանքի վիճակը ՄՏ կայանում և խորհտնտեսության մեջ, վորոնք հանդիսանում են կոլտնտեսային գյուղի տնտեսական-քաղաքական կենտրոնները:

Կուսակցության վերջին վորոշումների և Կենտկոմի հունվարյան պլենումում ընկ. Ստալինի կողմից արտասանած «Գյուղում տարվելիք աշխատանքի մասին» պատմական ճառի տեսանկյան տակ, Պաջավիաքիմի, վորպես մասսայական պրոլետարական կազմակերպության և պաշտպանության աշխատողների դաստիարակման դըպրոցի, առաջ հսկայական կարեվորություն ունեցող քաղաքական խնդիր է ծառացած՝ ոգնել մեր կուսակցությանը «կոլտնտեսություններում մեծամասնությունը նվաճելու» գործում: Պաշտպանության դաստիարակչական աշխատանքը, վոր պետք է ազատված լինի դասակարգային անհարազատ տրամադրություններից, ամբողջովին տոգորված լինի բոլշևիկական վոգով և տարվի մատչելի ու պոպուլյար (մասսայական) ձևերով, պետք է հսկայական դեր խաղա կոլտնտեսային գյուղացիության սոցիալիստական վոգով վերադաստիարակելու գործում:

Դրա կապակցությամբ անհրաժեշտ է վերանայել գյուղի Պաջավիաքիմական բջիջների կազմակերպչական կառուցվածքը, նպատակ ունենալով ամրապնդելու ՄՏ կայանների և խորհտնտեսությունների բջիջների առաջատար դերը, և ամենամոտ ժամանակաշրջանում ամենամեծ քանակությամբ ուժեր ու միջոցներ նետել՝ ՄՏ կայաններում և խորհտնտեսություններում պաջավիաքիմիական ուժեղ կազմակերպություններ ստեղծելու և ամրապնդելու համար:

Աշխատանքի գյուղական բնագավառի դիֆերենցված



ղեկավարության խնդիրը ներկայումս հատուկ սրություն է ստանում: Դրա կապակցությամբ անհրաժեշտ է ստեղծել ԽՍՀՄ Պաջավիքիմի կենտրոնական խորհրդին կից և բոլոր հանրապետական, յերկրային ու մարզային Խորհուրդներին կից մշտական խորհրդակցություններ՝ գյուղում տարվելիք աշխատանքի վերաբերյալ, լայնորեն ներգրավելով Պաջավիաքիմիական հասարակայնությունը: Այդ խորհրդակցությունների խընդիրը պիտի լինի՝ հաշվի առնել փորձը, կենտրոնացնել և ուղղություն տալ գյուղում տարվելիք աշխատանքի գծով բոլոր միջոցառումներին և ապահովել այդ վողջ աշխատանքն անցկացնելը Կենտկոմի հունվարյան պլենումի վորոշումների վոգով:

ՄՏ կայաններին կից Պաջավիաքիմի բջիջների և խորհուրդների ղեկավար դերի ապահովումը կառուցվում է հետևյալ հիմունքներով.

ՄՏ կայանի խորհրդի (բջիջի) նախագահը հանդիսանում է Պաջավիաքիմի շրջանային խորհրդի պատասխանատու լիազորը, ՄՏ կայանի կողմից միացվող կոլտնտեսությունների բջիջների վողջ ցանցի համար: Այդ իր պաշտոնում նա հաստատվում է Պաջավիաքիմի մարզային (յերկրային, հանրապետական) խորհրդի կողմից, շրջանային խորհրդի և ՄՏ կայանի քաղբաժնի ներկայացման համաձայն:

2) ՄՏ կայանի Պաջավիաքիմի խորհրդի (բջիջի) նախագահի, վորպես շրջխորհրդի պատասխանատու լիազորի վրա խնդիր է դրվում.

ա) ապահովել դասակարգային-տոկուն քաղաքական գիծը ՄՏ կայանների և կոլտնտեսությունների Պաջավիաքիմի բջիջների աշխատանքի ընթացքում և

մաքրել այդ բջիջները դասակարգայնորեն անհարազատ տարրերից.

բ) հայտաբերել, կազմակերպել և աճեցնել պաշա-վիաքիմիական ակտիվը.

գ) ընտրել և պատրաստել ղեկավար կադրեր՝ կոլտըն-տեսությունների բջիջների համար՝ ամենից շատ դասա-կարգայնորեն տոկուն, ակտիվ և ռազմականորեն գրագետ, առաջին հերթին՝ ՄՏ կայանների բանվորներից և, հետո՝ ամենալավ, կուսակցությանն իրենց նվիրվա-ծությունն ապացուցած կոլտնտեսականներից.

դ) բազմակողմանի օգնություն ցույց տալ և հրա-հանգել կոլտնտեսային բջիջները՝ նրանց վողջ աշխա-տանքի ընթացքում և ստուգել նրանց աշխատանքը։

3) Այդ խնդիրների կենսագործման համար ՄՏ կա-յանի Պաշավիաքիմի նախագահի տրամադրության տակ է դրվում շարժական վարժակայանը և այլ՝ շրջա-նային նշանակություն ունեցող պրակտիկ (գործնա-կան) կազմակերպությունները, վորոնք աշխատում են տվյալ ՄՏ կայանի հողամասում։ Խորհրդի նախագահն իր բոլոր միջոցառումներն անց է կացնում թե ան-ձամբ և թե ՄՏ կայանի Պաշավիաքիմի բջիջի ակտիվի միջոցով։

Պաշավիաքիմի շրջանային խորհուրդները պատաս-խանատու չեն շրջանում տարվող աշխատանքի վիճա-կի համար, անմիջական կապ են պահպանում բոլոր բջիջների հետ, գանձում են անդամավճարները, կազ-մում են տարեկան ու կվարտալային ֆինանսական պլանները, մարտական մասնագիտական պատրաստու-թյան կոնտրոլ թվերը, կենսագործում են իրենց վար-ժական կազմակերպությունների ընդհանուր կազմա-կերպչական-քաղաքական ղեկավարությունը, անց են



կացնում շրջանային նշանակություն ունեցող միջոցա-ռումները, շրջանային խորհրդի լիազորի և ստորին բջիջների միջև տարաձայնություններ ծագելու դեպ-քում, բարձր ատյանի դեր են կատարում։

ՄՏ կայաններին կից Պաշավիաքիմի խորհուրդները գտնվում են ՄՏ կայանների քաղբաժինների անմիջական ղեկավարության տակ։

Կոլտնտեսություններում Պաշավիաքիմի այնպիսի ամուր բջիջներ ստեղծելու խնդիրը, վորոնք պետք է բոլշևիկորեն կռվեն մարտական պատրաստության ֆրոնտում՝ յերկրի պաշտպանության ամրապնդման համ-ար և պաշտպանության պարենավորման բազայի ապահովման համար, պետք է լուծվի հետեվյալ հիմնա-կան միջոցառումների օգնությամբ.

ա) Պաշավիաքիմի անվան կոլտնտեսային հարվածա-յին բրիգադների կազմակերպումը և այդ բրիգադների կողմից արտադրական և պաշտպանական աշխատանքի ամենալավ նմուշների ցուցաբերումը.

բ) պաշավիաքիմիական կազմակերպությունների կոնկրետ աշխատանքը գյուղատնտեսության քիմիացման ուղղությամբ, գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարի ընթացքում և հացահատիկի ախտա-հանման ուղղությամբ, այդ գործի մեջ ներգրավելով կոլտնտեսային ակտիվի լայն խավերը և պատրաս-տելով ռազմաքիմիական կադրեր (գազահանման ջո-կատներ և այլն).

գ) կոլտնտեսային ձին որինակելի խնամելու կազ-մակերպումը, գյուղատնտեսության և ԲԳԿԲ-ի համար ձիու նշանակության պրոպագանդը, կոլտնտեսային ախոռների շեֆությունը.

դ) գործնական պայքար դեպի տրակտորը և գյու-

ղատնտեսական մեքենան խնամքով վերաբերվելու համար, աշխատանքի և ռազմական ուսուցման ընթացքում օրինակելի կարգապահության արմատացման համար. սոցիալիստական դաշտերի և կոլտնտեսային գույքի պահպանության կազմակերպումը. վճռական պայքար պրոգուլների դեմ.

ե) պաշտպանության աշխատանքի շարժական ձևերի լայն ծավալումը [շարժական վարժակայաններ հրաձգային դպրոցներ, հրաձգարաններ (տիր), ցուցահանդեսներ, ագիտսայլակներ և այլն], որպեսզի աշխատանքն անցկացվի ոչ միայն ձմեռը, այլև ամառը՝ անմիջականորեն դաշտում.

զ) այդ աշխատանքի մեջ՝ շեֆության վերցրած ձեռնարկությունների Պաշտպանքիմի բջիջների ներգրավումը, ամենասերտ կապ հաստատելով ձեռնարկությունների և կոլտնտեսությունների պաշտպանքիմիական հարվածային բրիգադների միջև, նպատակ ունենալով արտադրական բրիգադների փորձը փոխանցել կոլտնտեսային բջիջներին։

Մարզային և շրջանային խորհուրդներին՝ սերտ կապ հաստատել ՄՏԿայանների և խորհտնտեսությունների քաղբաժինների հետ, առաջին հերթին այն քաղբաժինների հետ, որոնց պետերը նախկին բանակային աշխատողներ են եղել, ձգտելով, որ այդ կետերում աշխատանքը դրված լինի օրինակելի կերպով։ Խնդրել Հողժողկոմատի և խորհտնտեսությունների ժողկոմատի քաղբաժինները, որ նրանք հատուկ նամակներ ուղարկեն այդ քաղբաժինների պետերին։

Պլենումը հանձնարարում է բոլոր մարզային, երկրային, հանրապետական և շրջանային խորհուրդներին՝ ստուգել բջիջների աշխատանքը Պաշտպանքիմի



անվան կոլտնտեսություններում և այդ կոլտնտեսություններում պաշտպանության աշխատանքը դնել օրինակելի հիմքերի վրա։

15. Պաշտպանքիմի կազմակերպության կարևորագույն խնդիրն է՝ մասնակցել միջհավաքային աշխատանքին և այդ հիման վրա ամրացնել և ուժեղացնել պաշտպանքիմիական աշխատանքն ամբողջովին վերցրած, մանավանդ գյուղում։

Փոփոխիկների հետ տարվելիք աշխատանքը պետք է ուղղված լինի՝ դասակարգայնորեն-գիտակից, առկուն և սոցիալիստական շինարարության կայուն մարտիկի դաստիարակմանը, որը պետք է պատրաստ լինի ամեն մի րոպե զենքը ձեռքին դուրս գալու պրոլետարիատի դիկտատուրայի պաշտպանության համար։ Փոփոխիկը պետք է լինի՝ սոցիալիստական դաշտերի հարվածայինը, դասակարգային թշնամու և նրա ագենտուրայի դեմ անհաշտ պայքարողը, պետական պարտավորությունների կատարման, սոցիալիստական սեփականության պահպանության, հաստատուն աշխատանքային կարգապահության ամրապնդման և կոլտնտեսության ու խորհտնտեսության բերքատվության բարձրացման համար պայքարի ընթացքում օրինակելին։

Փոփոխիկի հետ տարվելիք անմիջական աշխատանքը պետք է անցկացվի պաշտպանության խրճիթներում, ՄՏ կայանների, կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների ռազմական անկյուններում։ Պաշտպանության խրճիթներն անմիջական խնդիր ունեն՝ բարձրացնել փոփոխիկի ռազմական վորակավորումը՝ մասնագիտական ու ռազմա-տեխնիկական խմբակներ կազմակերպելու, առօրյա քաղաքական աշ-

խատանքի և նրա հրաձգային պատրաստությունն ու. վորակավորումը բարձրացնելու միջոցով։ Պլենումը հանձնարարում է Կենտխորհրդի Նախագահությանը, ԲԳԿԲ քաղաքական վարչության հետ միասին, սահմանել.

ա) միջոցների միացման կարգը՝ գյուղում ռազմական աշխատանքի նյութական բազա ստեղծելու համար.

բ) միջնավաքային և պաշավիաքիմիական աշխատանքի միասնական պլան մշակելու կարգը.

գ) ռազմական աշխատանքի միասնական որվա ոգտագործման կարգը՝ պաշավիաքիմիական աշխատանքի ծավալման համար։

Մեր Ընկերության՝ վորպես մասսայական պրոլետարական կազմակերպության ուժն ու նշանակությունը կայանում է սոցիալիստական շինարարության խնդիրների և ԽՍՀՄ-ի պաշտպանության խնդիրների անխզելիության մեջ։ Անցյալ տարվա ամենագլխավոր մասսայական կամպանիաները՝ «Գործարանը պաշտպանության ամրոց» կոչման համար պայքարը, բջիջների ստուգատեսն ու վերընտրությունները անցել են այդ լոզունգի տակ։ Հավանություն տալով Կենտխորհրդի Նախագահության վորոշմանը՝ պաշավիաքիմիական բրիգադների մրցակցության մասին գյուղում պաշտպանության աշխատանքն ու գարնանացանն ամենից լավ անցկացնելու համար՝ Պլենումը կոչ է անում պաշավիաքիմիական բոլոր կազմակերպություններին և պարտավորեցնում է Պաշավիաքիմի բոլոր հանրապետական, մարզային, յերկրային և շրջանային խորհուրդներին ամենալայն աշխատանք ծավալել այդ մրցակցության շուրջը՝ Ընկերության բոլոր ողակներում, առա-



ջին հերթին՝ ՄՏ կայանների յեվ խորհտնտեսությունների բջիջներում յեվ այդ մրցակցությունը յելակետ դարձնել գյուղում պաշավիաքիմիական բջիջների ամրապնդման համար։

## Ավիացիոն աշխատանքի վիճակն ու հերթական խնդիրները Ընկերության մեջ

### I. ԱՎԻԱԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿԸ

Խորհրդային հզոր ոդային (ռազմական ու քաղաքացիական) նավատորմը, վոր ստեղծված է մեր կուսակցության և նրա Կենտկոմի հսկայական ջանքերով և դեպի այդ նավատորմն ընկ. Ստալինի բացառիկ ուշադրությամբ, հսկայական սեր է վայելում և ակտիվ ոգնություն ստանում Խորհրդային Միության բանվորներից ու աշխատավոր մասսաներից։

Բանվորների և աշխատավոր մասսաների, առաջին հերթին՝ Ընկերության անդամների լայն ծավալած ակտիվության և ինքնագործունեության հիման վրա, վերջին տարվա ընթացքում Պաշավիաքիմը խոշոր տեղաշարժերի և մի շարք անվիճելի նվաճումների յե հասել՝ սոցիալիստական հասարակակարգ կառուցողների յերեք սերնդի մեջ՝ նրա կողմից տարվող բազմատեսակ ավիացիոն աշխատանքի ընթացքում, վոր չափազանց կարեվոր նշանակություն ունի ավիացիոն շինարարության և յերկրի պաշտպանության ամրապնդման գործում։

Խորհրդային պլանյորիզմի զարգացման և պատանի ավիաշինարարների շարժման ասպարեզում խոշոր հաջողությունների յենք հասել. հիմնականում կատարված

են նշված քանակական ցուցանիշներն ու աշխատանքների պլանները, լայնորեն ծավալված և պլանյորական աշխատանքի վողջ սիստեմի վերակառուցումը։

Նոր նյութական մասով կահավորված ավիացիոն դպրոցները, վոր հանդիսանում են սեփական թռչող-տեխնիկական կադրերի պատրաստման հիմնական ձևերից մեկը, վերջին տարվա ընթացքում խոշոր չափով բարելավել են իրենց աշխատանքը և վորոշ նվաճումներ ունեն վթարանքների (դժբախտ պատահարների) թիվը պակասեցնելու գործում, իսկ առանձին դպրոցները, վորոնք բոլոր ցուցանիշների նկատմամբ լավ արդյունքներ ունեն, վթարանքներ բոլորովին չունեն։

Գիտական-հետազոտական աշխատանքն ամուր հիմքերի վրա յե դրված, և սավառնակների մի շարք նոր կոնստրուկցիաներ (կառուցվածքներ) են ստեղծված։ Այդ տեսակետից հատկապես կարևոր նշանակություն ունեն սավառնակների թեթև մատորավոր կոնստրուկցիաների բնագավառում ձեռք բերած նվաճումները։ Այդ կոնստրուկցիաներն ամենամոտ ժամանակաշրջանում արդեն լայն ճանապարհ են բաց անում թեթև մատորավոր ավիացիայի մասսայական արտադրության ու կիրառման համար, ինչպես Պաշավիաքիմի սիստեմում, այնպես էլ դրանից դուրս, ռազմական ոդային նավատորմի հզոր ռեզերվների (պահեստների) պատրաստության, կուտակման և մարզվածության համար և սոցիալիստական շինարարության ամենաբազմազան կարիքները սավառնակով սպասարկելու համար։

Դրա հետ միասին, խոշոր նշանակություն և հեռանկարներ ունեցող աշխատանք է կատարված արտադրության կոոպերացման բնագավառում։

Սակայն, չնայած մատնանշած տեղաշարժերին ու-



նվաճումներին, Ընկերության վողջ գործունեության մեջ, ընդհանուր առմամբ, ավիացիոն աշխատանքը դեռևս չի գրավել իր պատշաճ տեղը։ Ավիաաշխատանքի ընդհանուր վիճակը Պաշավիաքիմի կազմակերպությունների մեծ մասում դեռևս շարունակում է բացահայտորեն անբավարար մնալ։ Այդ մանավանդ վերաբերում է Բելոռուսիայի, Միջին Վոլգայի և Ուրալի Պաշավիաքիմի կազմակերպություններին։

Պլենումը հատկապես մատնանշում է, վոր Ընկերության տեղական մի շարք խորհուրդներ թերագնահատել են Կենտխորհրդի III պլենումի վորոշումները՝ ավիաաշխատանքի ծավալման ասպարեզում, մասնավորապես այդ աշխատանքի մեջ բանվորներին ու աշխատավոր մասսաներին, վողջ պրոլետարական հասարակայնությանը և, առաջին հերթին, յերիտասարդությանը լայնորեն ներգրավելու մասին ցուցումները։

Այդ թերագնահատման հետևանքով, աշխատանքի ծավալման այնպիսի ձևեր, ինչպիսին են՝ ագիտթռիչքները, ցուցադրական պլանյորական թռիչքները, հատուկ կինոֆիլմերի օգտագործումը, մասսայական առնակատարությունների, հավաքների կազմակերպումը և այլն, համապատասխան արտացոլում չեն գտել Պաշավիաքիմի տեղական կազմակերպությունների աշխատանքի ընթացքում։

Այդ պատճառով Ընկերության հիմնական օղակը՝ Պաշավիաքիմի բջիջը դեռևս Ընկերության անդամների ավիաանգրագիտության վերացման դպրոց չի դարձել։

Մասսայական աշխատանքի ծավալման նույն թերագնահատման հետևանքով, պատանի ավիաշինարարների մեջ տարած աշխատանքի համամիութենական ստուգատեսը, վորի առաջին տուրը (շրջանը) արդեն

ավարտված ե, Ընկերության կազմակերպությունների խոշորագույն մասում անց ե կացվել առանց Ընկերության տեղական խորհուրդների մասնակցության ու օգնության, վորի պատճառով 1933 թվին 500 հազար պատանի ավիաշինարարների ընդգրկման խնդիրը ձախողման վտանգի սպառնալիքի տակ ե դրված։

Պլանյորական աշխատանքի վերակառուցումն անթույլատրելի դանդաղ տեմպերով ե անցկացվում։ Պլանյորական կազմակերպությունների գործունեության մեջ դեռևս մասսայականություն չկա, վորն ապացուցվում ե ձեռնարկություններում յեղած պլանյորական խմբակների չնչին քանակով. ապահովված չեն անհրաժեշտ միջոցները՝ վարժական-սպորտական ցանցը կազմակերպչորեն ամրապնդելու համար, նույնպես և միջոցների մոբիլիզացին՝ նյութական ապահովման և անընդհատ աշխատանքի համար։

Քաղդաստիարակչական աշխատանքի, կարգապահության և ռազմականացման դրվածքը պլանյորական դպրոցներում, կայաններում ու խմբակներում դեռևս չի համապատասխանում պլանյորիզմի առաջ ծառացած խնդիրներին.

Ավիացիոն դպրոցների աշխատանքում մինչև հիմա չեն վերացված ամենախոշոր թերությունները։

Այդ թերություններից ամենագլխավորներն են. ավիացիոն դպրոցի գործունեության պարփակումը ներքին աշխատանքի նեղ շրջանակներում, պրոլետարական հասարակայնության հետ ունեցած կապի թուլությունը, իսկ հաճախ՝ նաև բացակայությունը։ Ընկերության դպրոցները դեռևս ավիակուլտուրայի օջախներ չեն դարձել, բացի հազվագյուտ բացառություններից։ Շարունակում են տեղի ունենալ դասակարգային աղճատման անթույլատրելի դեպքերը։ Թույլ ե քաղաշխատանքը։ Ռազմականացումը պատշաճ բարձրության վրա չի դրված։ Մի շարք դպրոցներում, անտնտեսավարության պատճառով, շարունակում ե տեղի ունենալ մասնագիտական և պարենային ֆոնդերի շռայլ վատնումը.



Չնայած վորոշ բարելավման, մի շարք ավիադպրոցներ իրենց աշխատանքի հիմնական տարրերի վերաբերմամբ (լարվածություն, գործող ինքնաթիռներից միջին թռիչք, օդաչուների շրջանավարտները և նրանց վորակը, արտադրանքի մեկ միավորի համար թռչելու ժամերի ծախսումը և նրանց արժողությունը) բավարար չափով չեն կատարել նրանց առաջադրված խնդիրները։

Կենտխորհրդի միջոցառումները՝ ավիադպրոցներն առանց արտադրությունից կտրելու ուսուցման փոխադրելու, այլոտակումներ կազմակերպելու վերաբերյալ, վոչ միայն չափազանց դանդաղ տեմպերով են կյանքում կիրառվում, այլև շատ հաճախ անշարժության ու դիմադրության են հանդիպում տեղերում։ Այդ խնդիրների լուծման համար առաջին քայլերի նախապատրաստությունն ու կյանքում կիրառելը, բացի առանձին կազմակերպություններից (Արևմտյան Սիբիր, Ներքին Վոլգա, Ղրիմ, Կենտրոնական Սևահող մարզ, Գորկի-Մոսկովյան մարզ), անբավարար վիճակում են գտնվում։

## II. ԱՎԻԱԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Յելնելով ավիացիայի որստորե աճող դերից ու նշանակությունից, յերկրի պաշտպանության գործի և սոցիալիստական շինարարության համար նույնպես և Ընկերության մարտական, միանգամայն նոր և իրագործելի վողջ խնդրից, այն ե՝ 1933 թվին պատրաս-

տել, առանց արտադրությունից կտրելու, հազար պիլոտ—ուսուցիչ, 30 հազար պլանյորիստ և 500 հազար պատանի ավիաշինարարներ, Պլենումն առաջարկում է բոլոր պաշտպանաքիմիական կազմակերպություններին՝ կենտրոնացնել իրենց ուշադրությունն ու ուժերը հետևյալ խնդիրների լուծման համար.

## 1. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1, Առաջիկա 2 ամսվա ընթացքում արմատականորեն վերակառուցել ավիաաշխատանքի վողջ սիստեմը, ապահովելով խոշոր օպերատիվությունը, կատարման առորյա սիստեմատիկ ստուգումը, դժբախտ պատահարների դեմ և բացթողնվող արտադրանքի վորակի համար վճռական պայքարը, այդ ամբողջ աշխատանքը զուգակցելով պրոլետարական հասարակայնության լայն ներգրավման և այերոակմբային մեթոդի կիրառման հետ։

2. Բոլոր ավիացիոն կազմակերպությունները յենթարկել Ընկերության հանրապետական, յերկրային և մարզային խորհուրդներին, այդ խորհուրդների նախագահությունների վրա դնելով վերոհիշյալ կազմակերպությունների աշխատանքի ղեկավարության ու վիճակի համար պատասխանատվությունը. այդ նպատակով ամրապնդել ՈՏԲ (Ողային տորմիղի բաժինների) կազմը, այդպիսիները կազմակերպել այնտեղ, վորտեղ դեռ գոյություն չունեն, և ապահովել հասարակական ակտիվի ամենալայն ներգրավումն աշխատանքի համապատասխան ճյուղերի վերաբերյալ Աջակցության Խորհուրդների մեջ։

3. Կենտխորհրդի Նախագահությանը՝ առ 1 մայիսի ս թ տեղերին ուղարկել ՈՏԲ (Ողային տորմիղի



բաժինների) մասին նոր կանոնադրությունը և պլանյորական ավիացիոն դպրոցների և այերոակումբների վերաբերյալ ցուցումները։

4. Սահմանել խորհուրդների նախագահների, ՈՏԲ (Ողային տորմիղի բաժինների), դպրոցների, կայանների և այերոակումբների պետերի անձնական պատասխանատվություն՝ բոլոր տեսակի մասնագիտական մատակարարումը և պետության կողմից բացթողնվող պարենը վոչ ուղղակի նշանակման համեմատ ծախսման համար։

5. Ամենից շատ նպատակահարմար համարել՝ ողային տորմիղի ամրապնդման համար աշխատավորների միջոցների հավաքումն անցկացնելու ժամանակ, հիմնականում այդ միջոցների ուղղումը Ընկերության ավիադպրոցների և այերոակումբների սավառնակամոտորային պարկի ուժեղացման համար, այդ նպատակի համար հանգանակվող միջոցները թողնելով Ընկերության տեղական կազմակերպությունների տնորինության տակ։

6. Վթարանքների (ավարիաների) դեմ վճռական պայքար մղելու նպատակով, Ընկերության այն խորհուրդների նախագահություններին, վորոնց իրավասության տակ գտնվում են ավիացիոն կազմակերպություններ, պարտավորեցնել չթողնել առանց նախագահության կամ նախագահության բյուրոյի քննության վոչ մի ավարիայի դեպք։

7. Ավիադպրոցների և նրանց շեֆությունը վերցրած կազմակերպությունների միջև յեղած կապն ամրացնելու և լայնացնելու նպատակով, նույնպես և ավիաաշխատանքի և ավիացիոն շինարարության մասսայականացման համար թույլատրել (Կենտխորհրդի

III պլենումի որոշումներից դուրս) այն ավագդպրոցներում, որտեղ աշխատանքի հիմնական տեսակների նկատմամբ բավարար ցուցանիշներ կան, դրա համար դպրոցական ինքնաթիռների օգտագործումը Պաշավիաքիմի ավիացիայի պետի գիտությամբ և Ընկերության տեղական խորհուրդների ներկայացուցիչների ներկայացման հիման վրա, սակայն այն պայմանով, որ այդ միջոցառումը կյանքում կիրառելը չանդրադառնա նորմալ ուսուցման ընթացքի և դպրոցների բյուջեների վրա։

Ավիացիայի պետին այդ հարցի մասին համապատասխան ցուցումներ մշակել և ուղարկել տեղերին։

## 2. ՄՈԴԵԼԻԶՄ

Պատանի ավիաշինարարության բնագավառում ուշադրությունը կենտրոնացնել ավիաշինարարների մեջ տարվող աշխատանքի համամիութենական ստուգատեսի երկրորդ տուրն անցկացնելու վրա, խնդիր դնելով՝ մինչև սույն տարվա վերջն այդ աշխատանքով ընդգրկել 500 հազար երեխա։

Գտնել, որ աշխատանքի տվյալ բնագավառը պետք է սերտորեն կապված լինի պիոներական շարժման և դպրոցի պոլիտեխնիզացիայի հետ և ամրացված լինի հենարանային բազաներով, լաբորատորիաներով, կաբինետներով և արհեստանոցներով։

Կենտխորհրդի Նախագահությանը հանձնարարել այդ աշխատանքն ապահովել անհրաժեշտ նյութերով, գրականությամբ, պլակատներով, գործիքներով և այլն։



## 3. ՊԼԱՆՅՈՐԻԶՄ

Վարժական-սպորտական պլանյորիզմի լայն ծավալման խնդիրները պահանջում են վճռական պայքար մղել աշխատանքի այդ տեսակի դեռ գոյություն ունեցող թերագնահատման դեմ, որ ցուցաբերվում է Պաշավիաքիմի մի շարք կազմակերպությունների կողմից, և պահպանողականության (կոնսերվատիզմի) դեմ, որ արտահայտվում է առանձին կազմակերպությունների կողմից աշխատանքի պրակտիկայում ստորին ցանցի զարգացման նկատմամբ (պլանյորիզմի խմբակն անմիջապես ձեռնարկություններում)։

Պլենումն առաջարկում է՝ Պաշավիաքիմի Խորհուրդների նախագահների անձնական պատասխանատվությամբ, հենվելով կոմերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունների ակտիվ մասնակցության վրա, պլանյորական աշխատանքի վերաբերյալ Համ ԼԿԵՄ-ի Կենտկոմի և ՀԱՄԿԽ-ի որոշումներին համապատասխան, առաջիկա երկու ամսվա ընթացքում արմատական բեկում առաջացնել պլանյորիզմի վերաբերյալ աշխատանքի ծավալման գործում, պլանյորական ցանցի ստեղծման գործում, առաջին հերթին՝ բոլոր կարևորագույն ձեռնարկություններում և հրահանգչական կադրերի պատրաստման համար դպրոցների ցանցի կազմակերպման ասպարեզում։

Անհրաժեշտ համարելով պլանյորների կառուցման և հավաքման պրակտիկայի լայն զարգացումն՝ անմիջականորեն տեղերում, հանձնարարել Կենտխորհրդի Նախագահությանը մեկ ամսվա ժամանակաշրջանում մշակել այդ նպատակի համար Պաշավիաքիմի տեղական կազմակերպություններին համապատասխան նյութեր մատակարարելու հարցը։

## 4. ԹԵԹԵՎ ՄՈՏՈՐԱՎՈՐ ԱՎԻԱՑԻԱՆ

Կենտխորհրդի Պլենումը գոհունակությամբ մատնանշում է, վոր թեթեվ մոտորավոր ավիացիայի պրոպագանդի բնագավառում, Պաշավիաքիմի հաստատուն գործունեության պատճառով և թեթեվ մոտորավոր սավառնակների սերիական արտադրության համար ավիացիոն արդյունաբերության պատրաստ լինելու հետևանքով, այս տարվա վերջում դուրս է գալիս այդ մեքենաների առաջին սերիան։

Յելնելով կառուցվածքի պարզությունից, շահագործման էժանությունից և ավիադպրոցների ու այերոակումբների համար թեթև մոտորավոր ավիացիայի գործադրության լայն հնարավորություններից՝ մարզանքի և սպորտի նպատակներով, նույնպես և Ընկերության խորհուրդների, գործադիր կոմիտեների և տնտեսական ձեռնարկությունների համար, վորպես սավառնակ-տրանսպորտի կապի գործադրության հնարավորությունից, Պլենումն Ընկերության բոլոր կազմակերպություններին պարտավորեցնում է կոմյերիտմիության հետ միասին կատարել հետևյալը.

1. Լայնորեն ծավալել թեթեվ մոտորավոր ավիացիայի արմատացման պրոպագանդը և աշխատանք անցկացնել Կենտխորհրդի Նախագահության կողմից ընդունված վորոշումների կենսագործման համար՝ սավառնակներ ձեռք բերելու համար միջոցների հանգանակության բնագավառում։

2. Ապահովել ավիացիայի պետին՝ շտապ կարգով մշակելու թեթև մոտորավոր սավառնակի շահագործումը մաքսիմալ չափով էժանացնելու հարցը, շարունակելով թեթև սավառնակների և սակավազոր մոտորների փորձնական տիպարներ ստեղծելու աշխատանքը։



3. Արդյունաբերական մարզերին, յերկրներին և հանրապետություններին աշխատանք ծավալել կոպերացված արտադրության համար, օգտագործելով Մոսկվայի, Ուկրայինայի և Լենինգրադի կազմակերպությունների փորձն այդ բնագավառում։

4. Կենտխորհրդի Նախագահությանը հանձնարարել քննության առնել սակավազոր մոտորների հզոր գործարանի կառուցման հարցը և, անհրաժեշտության դեպքում, այդ առթիվ միջնորդություն հարուցել կառավարության առաջ։

## 5. ԱՎԻԱԴՊՐՈՑՆԵՐ

Կենտխորհրդի Պլենումը սահմանում է, վոր օդային նավատորմի ռեզերվի պատրաստության, կուտակման իրացման և մարզանքի կապակցությամբ, Ընկերության կողմից պատրաստվող պիլոտ-օդաչուների օգտագործման կարգի փոփոխության հետևանքով, նույնպես և ավիաշխատանքն արտադրությանը մոտեցնելու և օդաչուի պատրաստության արժողությունն էժանացնելու նպատակով, ավիադպրոցների միմիայն վորոշ մասը պետք է պահպանվի գոյություն ունեցող հիմունքներով։

Անհրաժեշտ համարել այդ դպրոցների օգտագործումը, գլխավորապես. հրահանգչական կազմի պատրաստության և կատարելագործման համար, այերոակումբների և տեղական ավիացայի սավառնակների համար պիլոտներ բաց թողնելու համար, նույնպես և այն դեպքերում, յերբ ամենամոտ ժամանակաշրջանում հատուկ պայմանների հետևանքով աննպատակահարմար է այերոակումբների կազմակերպումը։

Բոլոր ավիադպրոցների համար խնդիր դնել՝

նրանց արտադրությունից կտրելու ուսուցման մեթոդի այն կիրառումը և ավիադպրոցների մեծ մասի հաջորդական փոխանցումն աերոակումբային սկզբունքներով աշխատելու համար։

Ավիադպրոցների, նույնպես և աերոակումբների գործունեության ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել դասակարգային աչալրջության ապահովման, ղեկավար, սպասարկող և փոփոխական կազմի ընտրության, ավիադպրոցների ավիակուլտուրայի և պրոլետարական հասարակայնության հետ կապ պահպանելու իսկական օջախների վերածելու խնդիրներին։

Հատուկ ուշադրություն դարձնել դժբախտ պատահարների և հարկադրված իջեցման դեմ անդուլ պայքար մղելու և նախազգուշական միջոցներ ձեռք առնելու վրա։

Նորից կրկնել Կենտխորհրդի III Պլենումի որոշումը՝ կարգապահության, ուսուցման որակի, քաղաշխատանքի կազմակերպության, նյութական մասին անթերի խնամելու, պահպանելու և շահագործելու համար անդուլ պայքար մղելու մասին։

Հատկապես ընդգծել խիստ հաշվառում կատարելու, խնայողական-ռեժիմի պահպանման, անտնտեսականության դեմ պայքարելու և ուսուցման արժողությունը մաքսիմալ չափով էժանացնելու անհրաժեշտությունը։

## 6. ՊԱՐԱՇՅՈՒՏԻԶՄ

Հավանություն տալ Կենտխորհրդի Նախագահության միջոցառումներին՝ պարաշյուտիզմի լայն զարգացման վերաբերյալ և պարտավորեցնել Ընկերության Խորհուրդներին վարժական պարաշյուտիզմն արմատացնելու Պաշավիաքիմի անդամների լայն խավերի մեջ։



Ավիացիայի պետին՝ տեղերն ապահովել պարաշյուտային վիշկաների գծագրերով ու վարժական պարաշյուտներով։

## 7. ԱՅԵՐՈԱԿՈՒՄԲՆԵՐ

Ռազմաօդային նավատորմի համար վստահելի ռեզերվների պատրաստության և երկրի աերոֆիկացիայի հսկայական խնդիրները պահանջում են ոչ միայն ամրապնդել և վերակառուցել ավիաաշխատանքի գոյություն ունեցող սիստեմը, այլև անցնել նոր կազմակերպչական այնպիսի ձևերին, որոնք մասսաների լայն հետաքրքրվածության և ինքնագործունեության հիման վրա կարողանան ապահովել չտեսնված չափերով առաջադրված խնդիրների լուծումը՝ ավիացիոն տեխնիկական պրոպագանդի և ավիակադրերի պատրաստության բնագավառում։

Այդ աշխատանքի մեջ աշխատավոր մասսաների անմիջական մասնակցությունն ապահովելու, ավիակադրեր պատրաստելու, առանց արտադրությունից կտրելու նրանց մարզելու, պատրաստության արժողությունն էժանացնելու, ավիագործնական կազմակերպությունն անցաթողի ընդունակությունը բարձրացնելու, ավիապրոպագանդի և աշխատանքի բազմազան տեսակները միացնելու և բոլոր շահագրգռված կազմակերպությունների ու ողջ Խորհրդային հասարակայնության ուժերն ու միջոցները ներգրավելու նպատակով, Պլենումն առաջադրում է աերոակումբային սիստեմը, որպես ավիաաշխատանքի հիմնական և վճռական ձևի ծավալում։ Պլենումն ընդգծում է, որ, միմիայն այդ խնդրի հաջող լուծման դեպքում, հնարավոր է այն հսկայական պլանի կատարումը, որ դրված է Պաշ-

ավիաքիմի և ամբողջ յերկրի առաջ՝ սոցիալիստական շինարարության և պաշտպանության ծառայության համար ավիացիան գործադրելու գործում:

Պլենումն առաջարկում ե Ընկերության այն բոլոր խորհուրդներին, վորոնց կազմակերպության մեջ 1933 թվի պլանով նշված ե նոր այերոակումբների ստեղծումը, կամ գոյություն ունեցող ավիադպրոցների փոխանցումն այերոակումբային սիստեմի, հատուկ ուշադրություն կենտրոնացնել այդ խնդրի կատարման վրա: Այդ աշխատանքն անհրաժեշտ ե ծավալել՝ այերոակումբների նշանակության և խնդիրների մասին լայն մասսայական բացատրական պրոպագանդ մղելու հիման վրա (մամուլում, հատուկ կոնֆերանսներում, մասսայական գրականություն հրատարակելու միջոցով և այլն)՝

Դրա հետ միասին IV Պլենումն առաջարկում ե Ընկերության մնացած կազմակերպություններին լայն նախապատրաստական աշխատանք անցկացնել՝ այս տարվա աշնանը (սեպտեմբեր ամսում) այերոակումբային ցանցի հետագա ծավալման հնարավորությունները նախորոք վորոշելու համար, վորպեսզի 1934 թվի ընթացքում մի քանի հարյուր տեղում գերակատարվի այս տարվա աշխատանքի ծրագիրը, և Պաշավիաքիմը կատարի հսկայական կարևորություն ունեցող խնդիրները, վոր դրված են նրա առաջ յերկրորդ հնգամյակի կողմից:

1933 թվին Պաշավիաքիմի սիստեմի միջոցով մեկ հազար պիլոտ-ոդաչու, 30 հազար պլանյորիստ և 500 հազար պատանի ավիաշինարարներ պատրաստելու խնդիրը՝ նպատակ ունենալով հետագա տարիների ընթացքում խորհուրդների յերկրին տալ արդեն միլիոնավոր պատանի ավիաշինարարներ, շատ հարյուր հազարավոր պլանյորիստներ, հարյուր հազարավոր պիլոտներ և ավիամասնագետներ, հրամայողաբար պահանջում ե Պաշավիաքիմի բոլոր կազմակերպություններից իսկական և վճռական բեկում մտցնել այդքան պատասխանատու աշխատանքի ղեկավարման այդ վողջ սիստեմում:

Պլենումը համոզված ե, վոր Պաշավիաքիմի բոլոր կազմակերպություններն ակտիվորեն և բոլշևիկորեն կլծվեն ավիացիոն աշխատանքին և իրենց հետագա վողջ աշխատանքի մարտական լոզունգներ կդարձնեն հետևյալը.

Յուրաքանչյուր դպրոցին ու պիոներջոկատին՝ պատանի ավիաշինարարների մի-մի խմբակ:

Յուրաքանչյուր գործարանին, ֆաբրիկային, խորհտնտեսությանը, կոլտնտեսությանը, ՄՏՍ կայանին պլանյորիստների մի-մի խմբակ:

Յուրաքանչյուր պրոլետարական կենտրոնին դպրոց, այերոակումբ:

## Պաշավիաքիմի՝ հակօդային պաշտպանության վերաբերյալ խնդիրների մասին:

Լսելով Ընկերության Լենինգրադի և Ուկրաինայի կազմակերպությունների հաշվետու զեկուցումները՝ ՀՕՊ (հակօդային պաշտպանության) բնագավառում կատարած աշխատանքի մասին և քննարկելով Պաշավիաքիմի աշխատանքի վիճակն, ամբողջովին վերցրած, յերկրի պաշտպանության այդ պատասխանատու բնագավառում, Կենտխորհրդի պլենումն արձանագրում ե, վոր անցյալ տարվա ընթացքում Ընկերության կողմից ընդհանուր առմամբ խոշոր աշխատանք ե կատարված և վորոշ հա-

ջողություններ են ձեռք բերված, մանավանդ ՀՕՊ (հակօդային պաշտպանության) ծառայության կազմակերպության գործում։

Սակայն այդ աշխատանքի տեմպերն ու վորակը բավարար չեն հանդիսանում, և ՀՕՊ (հակօդային պաշտպանության) աշխատանքն Ընկերության կազմակերպությունների մեծ մասում դեռևս անբավարար վիճակում է գտնվում։

## I. ՊԱՇԱՎԻԱՔԻՄԻ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Կենտկոմի պլենումը գոհունակությամբ արձանագրում է, վոր Ընկերության Լենինգրադի կազմակերպությունը՝ Համ Կ(բ)Կ Լենինգրադի մարզային կոմիտեյի և Պաշավիաքիմի Կենտխորհրդի Նախագահության մշտական ղեկավարությամբ ու աջակցությամբ մի շարք եյական նվաճումներ է ձեռք բերել նրան առաջադրած խնդիրների լուծման գործում, մանավանդ Լենինգրադում և Կրոնշտադտում։

1. ՀՕՊ (հակօդային պաշտպանության) անգրագիտության վերացման մասսայական աշխատանքի պլանը գերակատարված է։

2. Գազածխման և մարզանքի միջով արտադրական աշխատանքի ընթացքում ՀՕՊ (հակօդային պաշտպանության) պայմաններում բաց են թողնված հարյուր հազարավոր պրոլետարներ։

3. Մի շարք ձեռնարկություններում գործարանամբողջի համար պայքար մղելու ընթացքում ՀՕՊ (հակօդային պաշտպանության) մասսայական աշխատանքի ընդգավառն առաջին տեղերից մեկն է գրավել



(Կրասնայա Զարյա, Կրասնի Պուտիլովեց, Կալիցկու գործարանը, Կրասնի Տրեուգոլնիկ. Սեվերնայա Վերֆ, Ստալինի գործարանը, Սվետլանա, Սկորոխոդ, Վորոշիլովի գործարանը, Ելեքտրոսիլա և այլն)։

4. Բնակչության պաշտպանության յենթաշրջանների (թաղամասերի) կազմակերպումը հիմնականում ավարտված է. նրանցից 97% ապահովված է շենքերով։ Հիմնականում ավարտված է յենթաշրջանային խմբերի կազմակերպումը, իսկ քաղաքում անց է կացվել ունիտար (միացական) խմբերին պետկազմի կցումը։

5. Միանգամայն բավարար է հրամանատարական կադրերի ընտրությունը, ըստ վորում ապահովված է բարձր կուսակցական և պրոլետարական միջնախավը։

6. Կազմակերպված են և աշխատում են ՀՕՊ (հակօդային պաշտպանության) մարզային դպրոցը, շրջական դպրոցը և վարժակայանները, վորոնք ապահովում են առաջադրած խնդիրների կատարումը։

7. Անց է կացվում կազմակերպված խմբերի մարտական պատրաստություն և գոյություն ունեն, թեկուզ և վոչ բավարար չափով, հաջողություններ՝ մարտական պատրաստության ընթացքում սոցմրցակցության ու հարվածայնության մեթոդների կիրառման գործում։

Պլենումն արձանագրում է, վոր, չնայած ՀՕՊ հակօդային պաշտպանության) գրվածքի նյութական բարելավմանը՝ Լենինգրադ քաղաքի մի շարք շրջաններում ու ձեռնարկություններում, Հակօդային պաշտպանության ծառայության մարտական պատրաստությունն ընդհանուր առմամբ դեռևս չի ապահովված։ Հատկապես անթույլատրելի է մի քանի սահմանամերձ շրջանների ետ մնալը։

Մասսայական աշխատանքի վորակը դեռևս անբավարար է, միանգամայն անբավարար չափով է տարվում աշխատանքն անկազմակերպ բնակչության մեջ։ Դեռևս վոչ բոլոր շրջանային խորհուրդները և ստորին բջիջների ղեկավարները հասկացել են Հակօդային պաշտպանության վողջ կարևորությունը, մանավանդ Լենինգրադի մարզի պայմաններում։

Լենինգրադի Պաշտվիաքիմի աշխատանքի ամենագլխավոր թերություններն են.

Մասսայական աշխատանքի բացակայությունը, պարտադիր հիմունքներով գործող ՀՕՊ (հակօդային պաշտպանության) կազմակերպությունների ներսում, բացասաբար է անդրադառնում հաճախելիության վրա մի շարք շրջաններում։

Կենդանի ղեկավարության թուլությունը, մանավանդ մի շարք շրջանային (Վիբորգի, Վոլոդարսկու) խորհուրդներում, հասարակական ակտիվի, ՀՕՊ (հակօդային պաշտպանության) գործում միացվող կազմակերպությունների ուժերի և միջոցների վոչ բավարար չափով ներգրավումը և Աջակցության Խորհուրդների անաշխատունակությունը։

Ինչպես մասսայական աշխատանքում, այնպես էլ մանավանդ ՀՕՊ (հակօդային պաշտպանության) ծառայությունների կազմակերպության ու մարտական պատրաստության բնագավառում յետ մնալը մարզի ծայրամասերի շրջաններում։

Ունիտար (միացական) խմբակի կազմակերպման, պետկազմի կցման և Հակօդային պաշտպանության մարզային դպրոցի բացման ուշացումը՝ ժամկետների նկատմամբ մինչև 3 ամիս ժամանակով։

ՈԴՀԿ-ի (Ողային դիտողության, հաղորդման և կա-



պի) պոստերի ղեկավարության բացակայությունը. Դրանց պետերը պետք է օգտագործվեն վորպես կազմակերպիչներ՝ Պաշտվիաքիմի Հակօդային պաշտպանության վողջ մասսայական աշխատանքի համար նրանց աշխատանքի շրջաններում և նրանք պետք է ակտիվ հանդիսանան Պաշտվիաքիմի աշխատանքի համար, ամբողջովին վերցրած։

ՀՕՊ (հակօդային պաշտպանության) ծառայության պետերի կազմը չի ճանաչում իր մարտիկներին, մարտիկները չեն ճանաչում իրենց հրամատարներին։

Մարտական պատրաստությունն անցկացնելն աչքի չի ընկնում մեթոդների հնացածությամբ, ըստ վորում դրա վորակը նույնիսկ հրամատարական կազմի դըպրոցում հաճախ անբավարար է հանդիսանում։

ՀՕՊ (հակօդային պաշտպանության) աշխատանքի ֆինանսավորման գործում մի շարք շրջաններում (Վոլոդարսկու, Մոսկովյան և այլն) հայտաբերված են Հակօդային պաշտպանության նպատակային նշանակում ունեցող միջոցներն այլ կարիքների համար ծախսելու անթույլատրելի փաստեր, վորոնց հետևանքով կրճատվել է աշխատանքի ծավալը և վիժեցվել են աշխատանքները կատարելու ժամկետները, նույնպես և աշխատավարձն իր ժամանակին վճարելը։

ՀՕՊ (հակօդային պաշտպանության) կազմակերպությունների անհարազատ տարրերով աղբոտության առանձին դեպքերը։

ՀՕՊ (հակօդային պաշտպանության) ծառայության քաղաքական ապահովման վիճակն անբավարար է, կուսլիազորներ մի շարք յենթաշրջաններում չեն նշանակված, խմբակային կազմակերպիչները բաժանմունքներում գրեթե վոչ մի տեղ չեն նշանակված, քաղ-

ղեկի աշխատանքն ամենալավ դեպքում սահմանափակվում է քաղժամով:

## II. ՈՒԿՐԱՅԻՆԱԿԱՆ ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱԿՈԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Չնայած Ուկրայինական կազմակերպության առանձին նվաճումներին ՀՈՊ (հակոդային պաշտպանության) աշխատանքի բնագավառում (շահագրգռված կազմակերպությունների հետ կապ պահպանելը, հրամկազմի 2 դպրոցի ստեղծումը, գյուղում շարժական դպրոցների-վարժակայանների աշխատանքի փորձը), Հակոդային պաշտպանության աշխատանքի ընդհանուր վիճակն անբավարար է, մանավանդ մասսայական աշխատանքի ծավալման, դասակարգային աչալրջության ապահովման և Հակոդային պաշտպանության ծառայության քաղաքական ապահովումը կազմակերպելու գործում:

1. Ուկրայինայի Պաջավիաքիմի կենտխորհուրդը Հակոդային պաշտպանության աշխատանքի վողջ ղեկավարությունը հիմնականում վեր է ածել լոկ վարչարարության, վորի հետեվանքով, մի կողմից՝ չափազանց նեղ շրջանակների մեջ են դրվել մասսայական աշխատանքի բոլոր տեսակները, և մյուս կողմից՝ հասարակայնությունը փոքրիշատե բավարար չափով չի ներգրավված Հակոդային պաշտպանության աշխատանքը ղեկավարելու համար, և կրճատվել է հասարակական ակտիվի դաստիարակության ու պատրաստության աշխատանքը. այդ հանգամանքն իր հերթին անդրադարձել է Հակոդային պաշտպանության ծառայության կազմակերպությունների պատրաստության վրա:



2. Ղեկավարության այդպիսի խեղաթյուրման հետեվանքով, ՀՈՊ (հակոդային պաշտպանության) մասսայական աշխատանքը, բացի մի շարք բացառություններից, կրճատվել է ամենից առաջ ձեռնարկությունների բջիջներում. այդ առանձին դեպքերում պատճառաբանվում էր նրանով, վոր այնտեղ աշխատանք է տարվում գերատեսչական գծով: Հակոդային պաշտպանության անգրագիտության վերացման պլանը չի կատարվել, իսկ մի շարք կազմակերպություններ (Պոդոլիա) միևնույն ժամանակ անգրագիտության վերացումը համարում են վորպես առևտրական ձեռնարկություն, վորն ոգուտ է տալիս Ընկերությանը:

3. Մի շարք առանձին դեպքերում (Կիեվ) ՀՈՊ (հակոդային պաշտպանության) ինքնապաշտպանության խմբակների կազմակերպությունն անց է կացվում լիազորների միջոցով, վորոնք ներգրավվում են պարտադիր կարգով, փոխանակ ակտիվի խմբակներ դաստիարակելու և համախմբելու և համապատասխան բացատրական մասսայական աշխատանք անցկացնելու:

4. ՀՈՊ (հակոդային պաշտպանության) մասնակցողները, փոխանակ իրենց աշխատանքի ընթացքում մասսայական գործունեությունը զուգակցելու Հակոդային պաշտպանության ղեկավարության հատուկ որգան ստեղծելու ապահովման հետ, վնասակար տենդենց ունեն՝ գնալու ղեկավարման գերատեսչական շտաբների կազմակերպման ուղիով, առանց հենվելու մասսայական աշխատանքի և հասարակական ակտիվի վրա: Հակոդային պաշտպանության ծառայությունների պետկազմը չի ճանաչում իր մարտիկներին, մարտիկները չեն ճանաչում իրենց հրամանատարներին:

5. Աջակցության Խորհուրդների խոշոր մասն անաշ-

խատունակ ե, մի շարք շրջաններում նրանց աշխատանքը բացակայում ե։

6. Հատկապես անթույլատրելի յեն Ընկերության շրջանային և մարզային (Կիեվշչինա, Պոդոլիա, Դնեպրոպետրովսկ) խորհուրդների՝ գծով ՀՕՊ (հակօդային պաշտպանության) աշխատանքների ֆինանսավորում ունեցած խայտառակ վերաբերմունքի փաստերը։ Մի շարք խորհուրդներ վոչ մի կոպեկ չեն հատկացրել Հակօդային պաշտպանության աշխատանքի ապահովման համար, բացառապես հույս դնելով Հակօդային պաշտպանության գործին ներգրավված կազմակերպություններից միջոցներ ստանալու վրա։

Մի շարք դեպքերում (Դնեպրոպետրովսկ, Օդեսսա, Կրիվոյ Ռոգ) նույնիսկ ՀՕՊ (Հակօդային պաշտպանության) նպատակային միջոցները ծախսվել են զանազան միջոցառումների համար, բացի Հակօդային պաշտպանության, մինչդեռ այնտեղ վիժեցվել ե Հակօդային պաշտպանության աշխատանքը՝ միջոցների բացակայության պատճառով։

7. Հատկապես անթույլատրելի յե քաղաքական ապահովության և դասակարգային աչալրջության բացակայությունը, վորոնք վճռական պայման են կազմում ՀՕՊ (հակօդային պաշտպանության) վորջ ծառայության մարտունակության համար, վոր կոչված ե ակտիվ մասնակցություն ունենալ յերկրի պաշտպանության գործում պատերազմի հենց առաջին որերից։ Դնեպրոպետրովսկի դպրոցում անհավատալի դասակարգային աղբոտում թույլ տալը, կցվող պետկազմի առանց վերստուգման ընդունումը, նախկին սպիտակների դասակարգայնորեն-անհարազատ տարրերի առկայությունը Հակօդային պաշտպանության սիստեմում, բնորոշ են



Ուկրաինական կազմակերպության համար և պահանջեցին մի շարք միջոցառումներ անցկացնել Հակօդային պաշտպանության կադրերի ստուգման և ամրապնդման համար։ Միևնույն ժամանակ, Հակօդային պաշտպանության կազմակերպության համար վոչ բոլոր տեղերում են նշանակված յեղել կուսակցական լիազորները, վորոնց գործունեությունն ամենալավ դեպքում սահմանափակվում ե քաղպարապմունքներ անցկացնելու գործով։ Բաղդեկները, վորպես կանոն, բացակայում են։ Խմբակային կազմակերպիչներ չեն նշանակված։ Մասսայական աշխատանքը Հակօդային պաշտպանության ծառայության սահմաններում չի տարվում։ Սոցմրցակցությունն իրականացվում ե ֆորմալ ձևով (ձևականորեն), առանց կոնկրետ ցուցանիշների։ Բացառություն ե կազմում միմիայն Կիևի Հակօդային պաշտպանության հրամկազմի դպրոցը։

## III. ԿԵՆՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արձանագրելով այն ուշադրությունը, վոր ցուցաբերել ե Կենտխորհրդի Նախագահությունը դեպի ՀՕՊ (հակօդային պաշտպանության) աշխատանքի հարցերը և ճանաչելով Հակօդային պաշտպանության աշխատանքի ղեկավարության ոպերատիվության ու աշխուժության խոշոր բարձրացումը Կենտխորհրդի կողմից՝ Կենտխորհրդի Պլենումը մատնանշում ե հետևյալ թերությունները.

1. Մասսայական աշխատանքի ծավալման բնագավառում տեղերի մշտական ղեկավարությունը Կենտխորհրդի Նախագահության կողմից բավարար չափով չի իրականացվում. Կենտխորհրդի Նախագահությունը

բավարար չափով ուշադրություն չի նվիրել «Տունը Հակօդային պաշտպանության ամրոցն է» լոզունգի կենսագործման համար պայքար մղելու հարցերի մշակմանը, նույնպես և անհրաժեշտ ցուցումներ չի տվել Հակօդային պաշտպանության կազմակերպությանը պետկազմին կցելու շուրջը մասսայական աշխատանքի ծավալման համար, որն անց է կացվում պարտադիր կարգով։

2. Աշխատանքն ապահովված չի մասսայական և ուսումնական-մեթոդական գրականությամբ։

3. Բնակչության պաշտպանության յենթաշրջանների (թաղամասերի), ինքնապաշտպանության խմբակների մասին կանոնադրության հրատարակության ուշացումը, նույնպես և Հակօդային պաշտպանության ծառայության մարտական պատրաստության համար ուսումնական ձեռնարկների հրատարակության ուշացումը։

## IV. ՀԱԿՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Յելնելով Պաջավխաքիմի վրա դրված ՀՕՊ (հակօդային պաշտպանության) խնդիրների կարևորությունից և այդ խնդիրները ժամանակին և հաջող կերպով լուծելու համար Ընկերության պատասխանատվությունից՝ Կենտխորհրդի Պլենումն անհրաժեշտ է գտնում նորից և ամբողջ վճռականությամբ ընդգծել Հակօդային պաշտպանության, որպես Ընկերության ամբողջ գործունեության ամենակարևոր բնագավառներից մեկի աշխատանքի նշանակությունը։

Լենինգրադի, Մոսկվայի, Բելոռուսիայի, Արևմտյան, Ուկրաինական, Անդրկովկասյան, Արևելյան Սիբիրի



և Հեռավոր Արևելյան կազմակերպությունների համար Հակօդային պաշտպանության աշխատանքի բոլոր տեսակների վճռական ամրապնդումը հատկապես լուրջ նշանակություն ունի։

Պլենումը բոլոր կազմակերպություններից վճռական դարձում է պահանջում դեպի Հակօդային պաշտպանության աշխատանքի և նրա ծավալման խնդիրները՝ աշխատավոր մասսաների խանդավառությունն ու ակտիվությունը կազմակերպելու, հասարակայնության լայն մասնակցությունն ապահովելու հիման վրա և լայն մասսայական աշխատանքը՝ Հակօդային պաշտպանության մարտունակ, հստակ և անընդհատ աշխատող ծառայության ստեղծման հետ զուգակցելու հիման վրա։

1. Վճռականորեն բարձրացնել վերևից մինչև ներքև Խորհուրդների և Ընկերության կազմակերպությունների նախագահների պատասխանատվությունն ընդհանուր առմամբ, Հակօդային պաշտպանության բնագավառի ամբողջ աշխատանքի ղեկավարության, վիճակի, հաշվառման և կատարման ստուգման համար։

2. Որպես Ընկերության բոլոր կազմակերպությունների ամենակարևոր խնդիրներից մեկը, Պլենումը համարում է Հակօդային պաշտպանության կադրերի վճռական մաքրումը բոլոր սոցիալապես անհարազատ և թշնամական տարրերից և Հակօդային պաշտպանության ծառայության ստուգված ղեկավար կադրերի և ակտիվի ընտրությունն ու պատրաստությունը։

3. Ամրացնել Աջակցության Խորհուրդները, ապահովելով նրանց հետագա աշխատանքը, ներգրավելով կոմյերիտմիության կազմակերպությունները՝ Աջակ-

ցության Խորհուրդների աշխատանքին և Հակօդային պաշտպանության վողջ սիստեմին մասնակցելու համար։

4. Ընկերության բոլոր կազմակերպություններին վճռական միջոցներ ձեռք առնել՝ Հակօդային պաշտպանության հասարակական աշխատանքը կազյոնշչինայի վերածելու տենդենցների դեմ պայքար մղելու համար, խնդիր դնելով Հակօդային պաշտպանության աշխատանքի բոլոր կողմերը շրջապատելու հասարակական ակտիվով և մասսաների վերահսկողությամբ. միևնույն ժամանակ ապահովել ինքնաքննադատության ծավալումը և այդ ամբողջ աշխատանքի ընթացքում Պաշավիաքիմի ստորին օղակի՝ բջիջի վրա հենվելը։

5. Վճռականորեն վերջ տալ բոլոր խեղաթյուրումներին՝ Հակօդային պաշտպանության աշխատանքի բոլոր տեսակները գաղտնի դարձնելու բնագավառում, սահմանափակել գաղտնապահության գործադրությունը միմիայն Հակօդային պաշտպանության ծառայության կազմակերպությունների և պատրաստության հարցերով, որ անց են կացվում պարտադիր հիմունքներով, այն էլ այն մասի նկատմամբ, որ վերաբերում է աշխատանքների ընդհանուր պլանին։ Այդ աշխատանքը պետք է տարվի հասարակայնության վրա հենվելու միջոցով, մասսայականության և ծավալված ինքնաքննադատության նշանաբանի տակ։

## II. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Պետք է խնդիր դնել, որպեսզի ամենամոտ ժամանակամիջոցում Ընկերության բոլոր կազմակերպությունները լայնացնեն և որակապես ամրացնեն մասսայական աշխատանքը, առաջին հերթին՝ Ընկերության



վճռական օղակում—բջիջում, ինչպես ձեռնարկության մեջ, այնպես էլ անկազմակերպ բնակչության մեջ, ՀՕՊ (հակօդային պաշտպանության) անգրագիտության վերացման, գոյություն ունեցող գրականության, դիապոզիտիվների, կինոժապավենների, ձեռնարկների և անօթների օգտագործման օգնությամբ; ՀՕՊ (հակօդային պաշտպանության) մրցակցություններ, ցուցադրումներ կազմակերպելու միջոցով և այլն։ Այդ ամբողջ աշխատանքի ապահովման համար պետք է լայնացնել ՀՕՊ ակտիվի ստորին կադրեր պատրաստելու համար կարճատև կուրսեր անցկացնելու պրակտիկան, այդ աշխատանքի համար ներգրավելով Ընկերության ռազմաքիմիական աշխատողներին։ Միաժամանակ ուշադրությունը պետք է կենտրոնացնել վողջ մասսայական աշխատանքի որակը բարձրացնելու վրա, թույլ չտալով, որ այդ աշխատանքն անցկացնելը կամպանիոն բնույթ կրի։

2. Հատուկ ուշադրություն դարձնել ՀՕՊ (հակօդային պաշտպանության) ինքնապաշտպանության խմբակների և կամավոր խմբերի ծավալմանը, այդ աշխատանքը համարելով որպես ՀՕՊ մասսայական գործունեության ձևերից մեկը։ Պետք է խնդիր դնել սպառնալիքի ներքո գտնվող խոշոր արդյունաբերական կենտրոններում ինքնապաշտպանության խմբակներ կազմակերպել միջնակարգ դպրոցների ավելի բարձր խմբերից։

3. ՀՕՊ մասսայական աշխատանքն անկազմակերպ բնակչության մեջ և բանվորական հանրակացարաններում ծավալելու ժամանակ, որպես մարտական խնդիր դնել պայքար մղելու՝ տները, թաղամասերը «ՀՕՊ պաշտպանության ամրոցներ» դարձնելու համար, այդ

աշխատանքը զուգակցելով Պաշավիաքիմի տերիտորիալ բջիջների գործունեության կազմակերպման և ծավալման հետ:

## III. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

1. Հակոդային պաշտպանության կազմակերպումն անցկացնելու ժամանակ հասարակայնությունն ու մասսայականությունն ապահովելու խնդիրների հետ միասին, պետք է պարտադիր խնդիր դնել՝ ամենակարճ ժամանակամիջոցում հասնել նրանց կազմակերպչական լիակատար ձևավորմանն ու համախմբմանը, հրամատարի կողմից յուրաքանչյուր մարտիկի ուսումնասիրության հիման վրա:

2. Ամբողջ աշխատանքի վորակը բարձրացնելու նպատակով, սպառնալիքի յենթակա շերտում յեղած բոլոր քաղաքային կենտրոններում նշանակել աշխատանքի հենարանային ցուցադրական բնագավառներ (ջոկ, խումբ, բնակչության պաշտպանության թաղամասեր, ինքնապաշտպանության խմբակ, տուն, ցեխ, բջիջ և այլն), նրանց համար խնդիր դնելով՝ ցուցադրումն ու փորձն աշխատանքի մյուս բնագավառներին փոխանցումը:

3. Նպատակահարմար գտնել յերկաթուղային խոշոր հանգույցների մոտ յեղած բնակավայրերում, անհրաժեշտ դեպքերում Պաշավիաքիմի խորհուրդներին իրավունք վերապահել բնակավայրի ՀՈՊ (Հակոդային պաշտպանության) ծառայության համար աշխատանքի ներգրավելու Ընկերության տրանսպորտային կազմակերպությունները:

4. Հատուկ ուշադրություն դարձնել ՈԴՀԿ (Ոդային Դիտողության Հաղորդման և Կապի) պոստերի ղեկա-



վարությանը, խնդիր դնելով լիովին ոգտագործելու ՈԴՀԿ պոստերի պետերին, վորպես Պաշավիաքիմի ակտիվի՝ նրանց մշտական աշխատանքի շրջաններում:

## IV. ԿԱԴՐԵՐ

1. Առաջարկել բոլոր կազմակերպություններին ուշադրությունը կենտրոնացնել հրամատարական ղեկավար կադրերի և ՀՈՊ (հակոդային պաշտպանության, ակտիվի կադրերի ընտրության ու պատրաստության) վրա, ծավալելով սեմինարների, կուրսերի և դպրոցների վողջ ցանցը, առաջադրված խնդիրներին համապատասխան:

2. Յեթե հնարավորություն չլինի տեղում ընտրելու ԲԳԿԲ պահեստի պետկազմից ՀՈՊ (հակոդային պաշտպանության) ծառայության համար անհրաժեշտ կադրեր, կազմակերպել այդ կադրերի պատրաստությունը ՀՈՊ-ի ստուգված ակտիվից, ամրացնելով նրանց ՀՈՊ-ի ծառայության սիստեմում:

3. Հատուկ ուշադրություն դարձնել՝ ՀՈՊ գործի համար առաջներում պատրաստած Պաշավիաքիմի կադրերի առաջին հերթին ոգտագործմանը, խնդիր դնելով, մանավանդ պետկազմի նկատմամբ, ապահովելու նրանց ճշգրիտ հաշվառումը: Խոշոր չափով լայնացնել ՀՈՊ կանանց ակտիվի պատրաստությունը, կատարելագործումը և հրամատարական ու ղեկավար պաշտոնների համար առաջ քաշումը:

4. ՀՈՊ (հակոդային պաշտպանության) կազմակերպությունները վորակապես ամրապնդելու նպատակով, ամեն կերպ լայնացնել պետկազմին այդ կազմակերպություններին կցելը, պաշավիաքիմական կամավոր ակտիվիստների մեջ բացատրական և հավաքագրական

աշխատանք անցկացնելու միջոցով, հետագայում նրանց ամրացնելով ՀՕՊ կազմակերպությունների սիստեմում պարտադիր սկզբունքների հիմունքներով։

5. Նկատի ունենալով բացառիկ կարևորությունը ս/թ ամառը տեղի ունենալիք առաջիկա վարժական հավաքների՝ ա) ըստ շրջանների, ԲՊ (բնակչության պաշտպանության) յենթաշրջանների պետերի համար, բ) պունկտային հավաքների՝ մարզի խմբերի պետերի համար, գ) պունկտային հավաքների՝ կրտսեր հրամկազմի համար և դ) յենթաշրջանային հավաքների՝ խմբերի վողջ կազմի համար, Պաշավիաքիմի այն բոլոր կազմակերպություններին, վորոնք առաջադրություն ունեն ՀՕՊ ծառայության վերաբերյալ, առաջին հերթին՝ Մոսկվայի, Լենինգրադի, Բելոռուսիայի, Արևմտյան և Հեռավոր-Արևելյան կազմակերպություններին՝ միջոցներ ձեռք առնել ժամանակին ղեկավար կազմի ընտրություն կատարելու, այդ հավաքները քաղաքականապես և տնտեսապես ապահովելու տեղական խորհուրդների ուժերով, իսկ ծրագրերի տեսակետից միջոցներ ձեռք առնել՝ Կենտխորհրդի Նախագահությանը։

## V. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Ընկերության բոլոր կազմակերպություններին վճռականապես միջոցներ ձեռք առնել ամեն կերպ քաղաքականապես ապահովելու ՀՕՊ ծառայությունը, միաժամանակ հաշվի առնելով ՀՕՊ ծառայության այդ կազմակերպությունների նշանակումը, վոր կոչված են պատերազմի հենց առաջին օրերից անընդհատ մարտական աշխատանք տանելու։ Քաղաշխատողների կադրերը համալրել, կազմակերպել նրանց վերապատրաս-



տությունն ու պատրաստությունը կարճատև սեմինարների միջոցով։ ՀՕՊ կազմակերպություններում մասսայական աշխատանք ծավալելու ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել սոցմրցակցությանն ու հարվածայնությանը, ինքնաքննադատության դրվածքին և այդ կազմակերպությունների շուրջը մոբիլիզացիայի յենթարկել այն հասարակական ակտիվը, առաջին հերթին՝ այն ստորին օղակները, վորտեղից ապահովվում է այդ կազմակերպությունների անձնական կազմը։ Հանձնարարել Կենտխորհրդի Նախագահությանը՝ մշակել ՀՕՊ (հակօդային պաշտպանության), ԲՊ (բնակչության պաշտպանության) բնագավառներում հատկապես անհրաժեշտ դեպքերում ազատված քաղաշխատողներ մտցնելու հնարավորության հարցը։

## VI. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Առաջարկել Պաշավիաքիմի բոլոր խորհուրդներին ստուգել ՀՕՊ աշխատանքի պլանների ֆինանսական ապահովումը, կտրականապես արգելելով ՀՕՊ նպատակային ֆոնդերի ծախսումն աշխատանքի այլ տեսակների համար և ապահովելով հատկացված միջոցների խնայողաբար և եֆեկտավոր ծախսումը։

2. Շրջանային խորհուրդներին, բջիջներին և ՀՕՊ կազմակերպությունների պետկազմին՝ հատուկ ուշադրություն կենտրոնացնել ՀՕՊ գույքով ապահովելու և այդ գույքի ճիշտ ու ժամանակին հաշվառում կատարելու, պահելու և խնամելու վրա։

3. Արգելել, առանց Կենտխորհրդի ՀՕՊ թույլտվության, ՀՕՊ գույքի վաճառումն այլ հիմնարկություններին։ Խորհուրդների նախագահություններին և նրանց մատակարարման բաժիններին պարտավորեցնել ապա-

հովելու ՀՈՊ գույքի մատակարարումը, առաջին հերթին՝ ՀՈՊ ծառայությունների կազմակերպություններին և Պաշավիաքիմի բջիջներին։

Յելնելով ՀՈՊ վողջ սիստեմի լիակատար մարտական պատրաստության ապահովման խնդիրներից և նկատի ունենալով աշխատանքի պարտադիր տեսակների կըրճատումը՝ Պլենումը պարտավորեցնում է Ընկերության բոլոր այն կազմակերպություններին, վորոնց վրա յե դրված ՀՈՊ ծառայության կազմակերպության և մարտական պատրաստության խնդիրները, լուծել նրանց առաջադրած խնդիրները սահմանված ճիշտ ժամկետներին, հատուկ ուշադրություն նվիրելով աշխատանքի վորակին։

## Պաշավիաքիմի 7-րդ վիճակախաղի իրացման ընթացքի մասին

1. 7-րդ վիճակախաղը բացառապես կարևոր նշանակություն ունի նյութական-տեխնիկական բազայի ամրապնդման և Ընկերության բոլոր օղակներում պաշտպանության աշխատանքի հետագա ծավալման գործում։

Վիճակախաղին ամենալայն օժանդակություն ցույց տալը քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների կողմից, վորը հիմնված պիտի լինի դեպի կուսակցության քաղաքականությունն ու նրա ամենամեծ վստահության վրա՝ յերկրի պաշտպանունակության ամրապնդման գործում, կուսակցական, արհեստակցական և կոմյերիտական կազմակերպությունների ակտիվ օգնությունը 7-րդ վիճակախաղն անցկացնելու գործում, այդ բոլորն ամենաբարեհաջող պայմաններ են ստեղծում վիճակախաղի վերաբերյալ առաջադրությունները լրիվ և ժամանակին կատարելու համար։



Վիճակախաղի հաջող ընթացքը կապահովի ընթացիկ տարվա նորմալ մարտական պատրաստությունը, Պաշավիաքիմի կազմակերպությունների համար ռազմատեխնիկական միջոցներ և սպառազենք ժամանակին ձեռք բերելը, մեր կադրերի պատրաստության հետագա լայն ծավալումը։

Վիճակախաղի իրացման գործում տեմպերի ամեն մի դանդաղումը, նրա հսկայական նշանակության թերագնահատումը կարող են պատճառ դառնալ պաշտպանության վերաբերյալ Ընկերության կարևորագույն միջոցառումների ձախողման։

Ընկերության բոլոր կազմակերպությունների պատվո գործն է՝ իրացնել վիճակախաղը ճիշտ նշված ժամկետներին։

2. Մի շարք առաջավոր կազմակերպությունների փորձը (Իվանովսկու, Մոսկվայի, Լենինգրադի և Բաշկիրիայի), վորոնք կարողացել են ժամանակին ծավալել քաղաքական մասսայական աշխատանքը 7 րդ վիճակախաղի կապակցությամբ և մինչև 4 րդ պլենումն արդեն կատարել են 42-ից մինչև 65%, ցույց է տալիս, վոր վողջ Ընկերությունն ամբողջովին վերցրած՝ կարող է և պետք է վիճակախաղը մարտականորեն իրացնել նշանակված ժամկետին։

Այդ ամբողջովին ապացուցվում է ամենալավ շրջանների և ձեռնարկությունների փորձով, վորոնք կարողացել են կատարել կոնտրոլ թվերը և լիակատար հաշվետվություն ներկայացնել դեռ մինչև Կարմիր Բանակի տարեդարձը (օրինակ՝ Իվանովո-Վոզնեսենսկի մարզի — Իվանովսկի քաղաքային, Միշկինսկի, Լեժնևսկի, Բրեյտովսկի, Նագորևսկի շրջանները, Բաշկիրիայի — Բիժբուլյակ, Դյուրտյուլի, Բակալի, Ն.-Իգլի շրջան-

ները, Լենինգրադի մարզի — Կրոնշտադտի և Կրասնոգվարդեյսկի շրջանները, Մոսկվայի մարզի — Տումսկի, Ուդոմեյլսկի, Չերնսկի, Կալյազինսկի, Կրասնո-Պրեսնենսկի շրջանները, Ուրալյան մարզի — Նիտվենսկի, Կամենսկի, Մախնևսկի շրջանները, Տրանսպորտում — Կազժելդորստրոյ, Թաթարական հանրապետության — Դուբյազսկի և Չիստոպոլսկի շրջանները, Հյուսիսային յերկրի Վելիկո-Ուստյուգի շրջանը, Հյուսիսային Կովկասի յերկրի Կաբարդինո-Բալկարսկայա մարզն ավարտել են վիճակախաղի հաշիվները մինչև կենտխորհրդի IV Պլենումը և այլն)։ 7-րդ վիճակախաղի վերաբերյալ աշխատանքի փայլուն օրինակներ են ցույց տվել այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսին են՝ «Բոլշևիկ», «Կրասնայա Զարյա», «Ռուսկի դիզել» (Լենինգրադ), վորոնք ավարտել են վիճակախաղը մի քանի օրվա ընթացքում, 2-րդ պետական ժամացույցային գործարանը, № 8 Միտիշչինսկի գործարանը, Կալինինսկի վագոնի գործարանը, Լեպսեյի անվան գործարանը, Ստայլոբյեդինենիյե (Մոսկվա), Մարքսի անվան Կադնեվսկի գործարանը, ընկ. Կույբիշևի անվան գործարանը — ք. Իրկուտսկ, տրակտորային բազա — ք. Մարիուպոլ, «Կրասնի Բուգորսկ» կոլտնտեսությունը — Չերնսկի շրջանի, ՕՍՕ-ի (Պաջը — պաշտպանության աջակցության ընկերության) անվան կոմունան — ք. Մարիուպոլ և այլն, վորտեղ վիճակախաղի աշխատանքը կազմակերպված է յեղել վորպես կարևորագույն քաղաքական կամպանիա, վորն անցել է բանվորների և կոլտնտեսականների անդուլ ուշադրության ներքո։ Այդ ձեռնարկությունների լավ փորձը պետք է օգտագործել մեր Ընկերության բոլոր կազմակերպություններում, վորպեսզի առ 1 մայիսի կազմակերպությունները կարո-



ղանան դուրս գալ իրենց ռապորտներով՝ վիճակախաղը լիովին ավարտելու մասին։

3. Շատ մարզային և շրջանային խորհուրդներ, մասնավորապես՝ Ուկրայինան, Անդրկովկասը, Բելոռուսիան, Հեռավոր Արևելքը և Արևելյան Սիբիրը չեն կարողացել անհրաժեշտ քաղաքական դասեր քաղել այն թերություններից ու սխալներից, վոր տեղի յեն ունեցել 6-րդ վիճակախաղի ընթացքում, չափազանց ձգձգել են նախապատրաստական աշխատանքի ծավալումը, չեն ապահովել բոլոր ուժերի մոբիլիզացիան՝ վիճակախաղը հարվածայնորեն և ամենակարճ ժամանակամիջոցում անցկացնելու համար։ Վիճակախաղի իրացումը բացահայտ ձախողման սպառնալիքի տակ է գտնվում՝ Ուկրայինայում, Անդրկովկասում, Հեռավոր Արևելքում, Արևելյան Սիբիրում և Բելոռուսիայում։

Անթույլատրելի դանդաղ է ծավալվում վիճակախաղի իրացումը՝ Միջին Ասիայում, Ներքին Վոլգայում, Կենտրոնական Սևահող մարզում, Ղրիմում և Արևմտյան մարզում, նույնպես և մի շարք յերկաթուղիներում (Յեկատերինենսկայա, Ռյազանո — Ուրալյան և Զաբայկալսկայա յերկաթուղիներում)։

Այդ կազմակերպություններում վիճակախաղի անբավարար ընթացքի վրա խիստ կերպով ազդում է այն հանգամանքը, վոր դրանք չեն կարողանում կազմակերպել պրոլետարական և կոլտնտեսային հասարակայնությունը և լայնորեն ծավալել մասսայական աշխատանքը սոցմրցակցության և հարվածայնության մեթոդներով, օգտագործել կուսակցական, կոմյերիտական կազմակերպությունների և մամուլի օգնությունը։ Մարզային ու շրջանային խորհուրդների մեծ մասը մինչև հիմա չի կարողացել վիճակախաղի աշխատանք

կոմիտեներ ստեղծել, փորձելով վիճակախաղն անցկացնելու բոլոր խնդիրները կատարել միմիայն ապարատի օգնությամբ։ Վիճակախաղի համար իսկական-բոլշևիկյան պայքար ծավալել չկարողանալը խոշոր չափով արտացոլում է մի շարք մարզային և շրջանային խորհուրդների աշխատանքի ընդհանուր անբավարար վիճակը։

Կենտխորհրդի Պլենումը գտնում է, որ հաջող իրացումը հանդիսանում է որպես ամենալուրջ գործնական ստուգում Ընկերության բոլոր կազմակերպությունների յեվ, առաջին հերթին՝ նրանց ղեկավարների համար, նրանց Բոլշևիկյան հասունության և այն բանի, թե նրանք որքան են կարողանում պայքար մղել Ընկերության պաշտպանական աշխատանքի տեխնիկական բազայի ամրապնդման համար։

4 Վիճակախաղի մասսայական քաղաքական աշխատանքը պետք է դրված լինի այնպես, որ յուրաքանչյուր կոլտնտեսական ու բանվոր, ձեռք բերելով վիճակախաղի տոմսը, այդ միանգամայն կամավոր կերպով և գիտակցորեն կատարի, պարզ հաշիվ տալով իրեն, որ նրա միջոցները գնում են Խ Ս Հ Մ պաշտպանունակությունն ամրապնդելու համար։

Մինչդեռ տոմսերը վաճառական մեթոդներով տարածելու շարունակվող դեպքերը՝ գյուղխորհուրդների, փոստի, հիմնարկությունների գանձապահների, յերկաթուղային դրամարկղների միջոցով, տոմսերի բյուրոկրատիկ տարածումն ամենաառաջատար ձեռնարկությունների և հիմնարկությունների հաշվին, յերբ Ընկերության գյուղական կազմակերպություններում մասսայական աշխատանք բոլորովին չի տարվում, վկայում են կուսա-



ցության և կառավարության ուղղակի ցուցումների հանցավոր խեղաթյուրումների մասին։

Հատկապես մեծ քանակությամբ այդպիսի դեպքեր են հայտաբերված Կենտրոնական Սևահող մարզում (Տամբով, Բելգորոդ, Լյգով քաղաքներում, Կաստորնենսկի շրջանում և այլն), վիճակախաղի աշխատանքի ընթացքում բացահայտորեն անտես անելով բջիջները (օրինակ՝ Լգովի շրջանում 7-րդ վիճակախաղի տոմսերը գիտմամբ բջիջներին չեյին տրվել և տարածվելիս են յեղել գանձապահների միջոցով կոմիսիոն վարձատրությամբ. Կաստորնենսկի շրջանում 6-րդ վիճակախաղի բոլոր տոմսերը և 7-րդ վիճակախաղի տոմսերի կեսն ամբողջովին տարածվել են տեղական փոստի բաժանմունքի միջոցով)։ Շարունակվում են տեղի ունենալ (մանավանդ յերկաթուղային տրանսպորտում) վիճակախաղի տիրաժ դուրս յեկած տոմսերը տարածելու հանցավոր դեպքերը (Հարավային և Կուրսկի յերկաթուղիներում)։

Անհրաժեշտ է նույնպես արձանագրել Ընկերության ղեկավար օղակների և վիճակախաղի կոմիտեների մեծ մասի հանցավոր-անփույթ վերաբերմունքը դեպի վիճակախաղի աշխատանքի մի չափազանց կարևոր կողմը, այն է՝ դեպի շահումների ժամանակին և 100% վճարումները։ 6-րդ վիճակախաղի տիրաժներից վճարված է ընդամենը շահումների 8,3%, իսկ մի շարք տեղական կազմակերպություններում շահումները համարյա թե չեն վճարվել, որն ըստ եյության տոմսեր ունեցողների ուղղակի թալանում է նշանակում։ Տեղերում անցած տիրաժների աղյուսակները չեն հասցվում բջիջներին և տոմսեր ունեցողներին. Պաշավիաքիմի մի շարք կազմակերպություններ չեն հրապարա-

կել տիրաժների տեղական ռազրյադների աղյուսակները (Ուկրայինա, Ղրիմ, Միջին Ասիա և այլն), բացակայում է մասսայական աշխատանքն անմիջականորեն ցեխերում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում և այլն: Այդպիսի անթույլատրելի դրությունը ստեղծվել է վիճակախաղի այդ կողմի օպորտունիստական թերագնահատման հետևանքով, ինչպես Պաշավիաքիմի Կենտխորհրդին կից վիճակախաղի կոմիտեյի կողմից, այնպես էլ շատ մարզային ու շրջանային խորհուրդների ղեկավարների կողմից:

Այդ հանգամանքը խիստ բացասաբար է ազդում նաև 7-րդ վիճակախաղի ընթացքի վրա:

6. Ընկերության կազմակերպություններում դրամական միջոցների գեղծարարությունների շարունակվող փաստերը (մանավանդ շրջանային օղակում, վիճակախաղի միջոցների շռայլ ծախսումը վոչ ուղղակի նշանակման համեմատ, տիրաժներից հետո տոմսերը մաքսելու մասսայական դեպքերը, հաշվետվության խճճումը, այս բոլորը մինչև հիմա էլ չի հանդիպում վճռական պայքարի՝ Պաշավիաքիմի ղեկավար օրգաններից շատերի կողմից, հնարավորություն տալով դասակարգային թշնամուն, գեղծարարներին, ավանտյուրիստներին անպատիժ կերպով գողանալ պաշտպանության գործի համար աշխատավորների կողմից հավաքած հարյուր հազարավոր ռուբլիները:

Մի շարք մարզային և շատ շրջանային խորհուրդների հանցավոր թողտվությունն ու անգործունեյությունն ուժեղանում են այն հանգամանքով, վոր վերստուգիչ հանձնաժողովների մեծ մասի կողմից բացակայում է իսկական բոլշևիկյան պայքարը՝ միջոցները



խնայողաբար ծախսելու համար: Փոխանակ ամենախիստ պատժի յենթարկելու գեղծարարներին, ղեկավարները դեռևս չափազանց հաճախ են զբաղվում դեկլարատիվ աղմուկով: Ամենալայն հաշվետվության փոխարեն գոյություն ունեն հետևյալ աննորմալ յերևույթները. մի շարք ղեկավարներ վախենում են ինքնաքննադատությունից, կտրված են հասարակայնությունից և չեն կարողանում կազմակերպել պաշտպանության միջոցների ծախսելու մասսաների սիստեմատիկ վերստուգումը:

## Կենտխորհրդի պլենումը վորոշում է

1. Վիճակախաղն ավարտել ճիշտ նշանակված ժամկետին: Կազմակերպությունների և նրանց ղեկավարների աշխատանքն Ընկերությունը կգնահատի վոչ թե նրանց դեկլարատիվ հայտարարությունների համաձայն, այլ վիճակախաղի կոնկրետ հետևանքների համեմատ, և թե վորքան կամավոր կերպով և գիտակցորեն կմասնակցեն վիճակախաղի աշխատանքներին ամենալայն մասսաները:

2. Առաջարկել բոլոր կազմակերպություններին ամենալայն աշխատանք ծավալել 6-րդ վիճակախաղի շահումները վճարելու շուրջը, պարտավորեցնելով մարզային ու յերկրային խորհուրդներին ապահովելու տեղերում անցած տիրաժների աղյուսակների հրատարակումը և այդ աղյուսակները հասցնելու Ընկերության բոլոր բջիջներին: Կազմակերպել բրիգադաներ՝ ձեռնարկություններում շահումներն ստուգելու համար, տեղեկատու սեղաններ՝ ակումբներում, խրճիթ-ընթեր-

ցարաններում, կինոներում, թատրոններում, բնակվարձկոոպներում և այլն։

Ստուգել խնայդրամարկղների շահումները վճարելու աշխատանքը, ներգրավելով խնայդրամարկղների աշխատողներին վիճակախաղի մեր աշխատանքներին ակտիվ մասնակցելու համար։ Լայն ինֆորմացիա տալ բանվորներին, կոլտնտեսականներին և ծառայողներին՝ շահումները ստուգելու և ստանալու կարգի մասին։

Մայիսի 1-ից մինչև 30-ը հատուկ միամսյակ անցկացնել շահումները վճարելու համար, որի ընթացքում ամենալայն աշխատանք ծավալել տոմսեր ունեցողների մեջ։ Մարզային ու շրջանային խորհուրդների նախագահների անձնական պատասխանատվությամբ ապահովել շահումների վճարումը՝ 60% առ 1 հունիսի. 90% առ 1 սեպտեմբերի և մնացածը ոչ ուշ, քան ս/թ նոյեմբերը։

Արձանագրելով խնայդրամարկղներից շատերի անթույլատրելի անփույթ վերաբերմունքը դեպի դրամական շահումների վճարումները, իսկ մի շարք դեպքերում վճարումների մերժումը՝ խնդրել ԽՍՀՄ ֆինժողկոմատի պետական աշխատավորական խնայդրամարկղների գլխավոր վարչությանը (հատկապես հյուսիսային Կովկասի, Մոսկվայի մարզի և այլոց վերաբերյալ) կտրուկ ցուցումներ տալ իր սիստեմին, որ անհրաժեշտ է վիճակախաղի տոմսեր ունեցողներին կոնկրետորեն սպասարկել և պատասխանատվության կանչել շահումների վճարումները ուշացնելու մեղավորներին։

3. Արձանագրել 7-րդ վիճակախաղի վերաբերյալ առաջատար կազմակերպությունների՝ Մոսկվայի, Իվանովո-Վոզնեսենսկի, Լենինգրադի և Բաշկիրիայի աշխատանքը և առաջադրել այդ կազմակերպություն-



ների թեկնածությունը համամիութենական կոնկուրսի համար։

Համամիութենական կոնկուրսն անցկացնել ս/թ. մայիսի 1-ից մինչև հունիսի 1-ը, 7 րդ վիճակախաղի համար սահմանելով ամենաբարձր մրցանակ (պրեմիա) IV Պլենումի անվան փոխանցիկ Կարմիր դրոշը։

Հատկապես մատնանշել այն շրջանների և ձեռնարկությունների աշխատանքը, որոնք ավարտել են վիճակախաղը մինչև ԲԳԿԲ 15-րդ տարեդարձը։

4. Նախազգուշացնել հետևյալ խորհուրդների նախագահներին՝ Ուկրաինայի — Ընկ. Բոգդանովին, Հեռավոր-Արևելյան երկրի — Ընկ. Դմիտրիևին, Արևելյան Սիբիրի — Ընկ. Զվերևին և Անդրկովկասյան կազմակերպության նախագահի տեղակալ Ընկ. Վասիլևին, որ նրանք լիակատար քաղաքական պատասխանատվություն են կրում 7-րդ վիճակախաղի միանգամայն անբավարար աշխատանքի համար։

Առաջարկել մնացած հետ մնացող կազմակերպություններին՝ անհապաղ մի շարք միջոցներ ձեռք առնել մասսայական աշխատանք ծավալելու վիճակախաղի լիակատար և ժամանակին իրացումն ապահովելու համար. կազմակերպել կենդանի հրահանգավորում և օգնություն ստորին կազմակերպություններին, լայնորեն կիրառելով սոցմրցակցության ու հարվածայնության մեթոդը և ամենալավ բջիջների և ակտիվիստների պարգևատրումը.

Առաջարկել Պաշավիաքիմի մատրաժնին տեղերում հատուկ ֆոնդեր անցկացնել՝ պարգևատրելու ամենալավ հարվածայիններին և ակտիվիստներին, նույնպես և Պաշավիաքիմի կազմակերպություններին՝ վիճակախաղն անցկացնելու համար։

5. Պարտավորեցնել մարզային ու շրջանային խորհուրդներին՝ վճռականապես վերջ տալ տոմսերը վարչական կարգով տարածելու բոլոր դեպքերին, մեղավորներին ամենախիստ վարչական և դատական պատասխանատվության յենթարկելով։

Առանձնապես նախազգուշացնել Կենտրոնական Սևվահող մարզի մարզային խորհրդի նախագահ Ընկ. Տարուտինին, Միջին Ասիայի յերկրային խորհրդի նախագահ Ընկ. Վզովինին և Կենտրոնական Տրանսպորտային Խորհրդի նախագահի տեղակալ Ընկ Լիպելինին վիճակախաղի աշխատանքի ընթացքում տեղի ունեցած շեղումներն ու խեղաթյուրումները վճռականորեն ուղղելու մասին։

6. Առաջարկել բոլոր մարզային խորհուրդներին և վերստուգիչ հանձնաժողովներին սիստեմատիկ կոնտրոլ նշանակել վիճակախաղի միջոցները ժամանակին փոխադրելու համար, անմիջապես հեռացնելով և դատի տալով բոլոր այն անձնավորություններին, վորոնք փորձում են վիճակախաղի միջոցները ծախսել վոչ ուղղակի նշանակման համեմատ, և հատկապես խիստ պատժելով պաշտպանության միջոցների զեղծարարներին։ Պլենումը, հավանություն տալով Կենտխորհրդի Նախագահության վորոշմանը՝ զեղծարարությունների դեմ պայքարելու մասին, առաջարկում է Ընկերության տեղական կազմակերպություններին՝ զեղծարարությունների գործերը դատական որգաններում տանել մինչև վերջը, լայնորեն կիրառելով ցուցադրական հասարակական դատերը, մամուլում Ընկերությունը խայտառակող փաստերի—զեղծարարությունների լուսաբանման մեթոդը, և անմիջապես Կենտխորհրդին հայտնել զեղծարարության ամեն մի փաստի մասին։



Ցուրաքանչյուր փափկամորթություն և դասակարգային աչալրջության բացակայությունը՝ պաշտպանության միջոցների հափշտակողների վերաբերմամբ կհամարվի վորպես դասակարգային թշնամու բացահայտ հովանավորում, դրանից բղխող բոլոր հետևանքներով հանդերձ։ Միաժամանակ Կենտխորհրդի Պլենումը հանձնարարում է Նախագահությանը միջոցառումներ մշակել վիճակախաղի հաշվետվությունը պարզեցնելու համար և կազմակերպել վիճակախաղի գումարները ծախսելու մասին վերեվից մինչև ներքեվ մասսաների առաջ հաշվետվություն տալու գործը, հաշվետվությունները մամուլում հրապարակելու, ձեռնարկություններում մասսայական աշխատանք անցկացնելու միջոցով և այլն։

7) 7-րդ վիճակախաղի տիրաժներն անցկացնել ապրիլի 15-ից մինչև հունիսի 1-ը ժամանակամիջոցում, նույնպես և ամենալայն աշխատանք կազմակերպել բոլոր շահումները տոմսեր ունեցողներին հասցնելու համար։ Պարտավորեցնել բջիջների խորհուրդներին ու նախագահություններին կանոնավորել բանվորների ու կոլտնտեսականների և տվյալ ձեռնարկության (խորհտնտեսություններ, կոլտնտեսություններ, ՄՏ կայաններ) բոլոր աշխատավորների մեջ տարածած տոմսերի հաշվառումը, նրանց վրա պատասխանատվություն դնելով շահումները տոմսեր ունեցողներին հասցնելու համար և ապահովել շահումների 100% վճարումն առ ս/թ. նոյեմբերի 1-ը։

7 րդ վիճակախաղի տիրաժներն անցկացնել հետևյալ կազմակերպություններում՝ Մոսկվայի, Լենինգրադի, Իվանովսկի, Ուրալյան, Թաթարստանի, Տրանսպորտային (Հյուսիսային Կովկասում) Արեվմտյան, Սի-

բիրյան, Ուկրայինական, Միջին-Ասիական, Ներքին Վոլգայի կազմակերպություններում. միաժամանակ հանձնարարել Կենտխորհրդի Նախագահությանը՝ տիրաժն անկացնել այլ առաջատար կազմակերպություններում, յեթե այդ կազմակերպություններից որևէ մեկը, որտեղ նախատեսված է 7-րդ վիճակախաղի տիրաժը, չկատարի իրեն առաջադրած պլանը:

8) Վճռականապես ամրապնդել վիճակախաղի կոմիտեների կազմը, այդ կոմիտեները վերածելով պրոլետարական հասարակայնության իսկական շտաբների՝ հանուն Ընկերության ֆինանսական բազայի պայքար մղելու համար, նրանց ամրացնելով արտադրությունից վերցրած պաշտպանության ամենալավ հարվածայիններով, որոնք 6-րդ և 7-րդ վիճակախաղերի փորձով ապացուցել են իրենց ընդունակությունը՝ մասսաների մոբիլիզացիայի հիման վրա վիճակախաղը բոլշևիկորեն իրացնելու: Վճռականապես արմատախիլ անել վիճակախաղի կոմիտեների աշխատանքի ընթացքում գործամոլության և ապաքաղաքականության տարրերը, նրանց աշխատանքները վերակառուցելով ամենալավ կազմակերպությունների փորձի ամենալայն փոխանակության և յետ մնացողներին օգնություն ցույց տալու հիման վրա:

Անհրաժեշտ համարել, որ 7-րդ վիճակախաղի առաջատարները սոցիալիստական բուքսիրի վերցնեն յետ մնացող կազմակերպությունները և նրանց փոխանցեն իրենց աշխատանքի փորձը:

9) Կենտխորհրդի Պլենումը խնդրում է Համ ԼԿՅԵՄ Կենտկոմին և ՀԱՄԿԽ ստուգել իրենց կազմակերպությունների աշխատանքն այն մարզերում ու յերկրնե-



րում, որտեղ ամենից շատ թույլ է ծավալված 7-րդ վիճակախաղի իրացումը, և գործնական օգնություն ցույց տալ Ընկերությանը՝ վիճակախաղի վերաբերյալ առաջադրությունները ճիշտ նշված ժամկետներին կատարելու համար:

Պաշտպանելով մի շարք գործարանների (Միտիշչի, Կադնեվկայի, Թաթարստանի հանրապետության) նախաձեռնությունը, Պլենումը հանձնարարում է Կենտխորհրդի Նախագահությանն սկսել 8-րդ վիճակախաղի նախապատրաստության գործն այն հաշվով, որ տոմսերը շրջաններում բջիջներին հասցնելու հիմնական աշխատանքն սկսված լինի սույն թվի նոյեմբեր ամսում: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել 8-րդ վիճակախաղի տեխնիկայի պարզեցմանը և տիրաժների թվի կրճատմանը:

Հանձնարարել Կենտխորհրդի Նախագահությանը վերանայել տեղական կազմակերպություններին հատկացվելիք տոկոսների սանդղակը (շկալան), դրանց բարձրացնելու նպատակով, և համապատասխան չափով կրճատել Ընկերության գործնական աշխատանքի համար բաց թողնելիք դոտացիան:

10) Առաջարկել Ընկերության բոլոր կազմակերպություններին՝ վիճակախաղի աշխատանքն անպայման զուգակցել ձեռնարկություններում, ՄՏ կայաններում, խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում տարվելիք լայն ռազմա-քաղաքական ու ռազմական-մասսայական աշխատանքի ծավալման հետ, ռազմական յերթերի, տագնապների, լագերների, ռազմական տեխնիկային ծանոթանալու, դեպի ԲԳԿԲ զորամասերը տեղի ունենալիք էքսկուրսիաների և ռազմա-գործնա-

40.470

կան աշխատանքի այլ ձևերի հետ, վճռականապես պայքար մղելով տոմսերն աշխատավորների մեջ բյուրոկրատիկ ձևով բաշխելու մեթոդների դեմ և լայնորեն ներգրավելով բանվորներին ու կոլտնտեսականներին՝ պաշտպանության վերաբերյալ Ընկերության կողմից տարվելիք գործնական աշխատանքի մեջ։

---

РЕШЕНИЯ

IV Пленума Центрального Совета Союза Осоавиахима СССР и РСФСР

ՀՀ Ազգային գրադարան
NL0219649

Гос. Библиотека
ZUUՌ-Арм ССР
им. А. Мясникова